



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Handwritten text in Armenian script at the top of the page, including a signature and a date.

6-85


# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ

## ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹԵԱՆ

ԵԼՏԻ ԳՈՒԼԷԻ ԱԳԳ. ՀԻՆԱՆՈՂԱՆՈՅԻ

(Ս. ՓՐԿԻՉ)

1900 ՅՈՒՆՈՒԱՐ 1 ԷՆ 1900 ԴԵԿՏԵՄԲԵՐ 31



معارف نظارت جلیله سنک فی ۱۱ اغستوس سنه ۳۱۷ تاریخلو و ۲۶۷  
نومرولی رخصتنامه سیله طبع اولمشدر.



Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1901

Printed in Turkey

61  
4-23

1901 թ. 11

61  
63-23  
u

20 JUL 2010

50


# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Printed in Turkey

## Հ Ո Գ Ա Ւ Ր Զ Ո Ւ Թ Ե Ա Ն

### Ե Է տի Գ ու Լ է ի Ա զ գ. Հ ի Լ ա ն ղ ա ն ղ ի

1900 Յ Ո Ւ Ն Ո Ւ Ա Ր 1 Է Ն 1900 Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր 31



Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1901

31 JAN 2013  
JUL 08

384

...



824  
40

# Տ Ե Ղ Ե Կ ա գ ի ր

Printed in Turkey

Հ Ո Գ Ա Բ Ա Ր Զ Ո Ի Յ Ե Ա Ն

## ԵԼՏԻ ԳՈՒԼԵԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

1900 Յունուար 1 և 1900 Դեկտեմբեր 31



Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր

և

Պատուարժան ՏեարթԱնդամք Բաղասական Պատկառելի Ժողովոյ

Ազգային Կեդրոնական Վարչութեան

Հոգաբարձութիւնս իր այս երկրորդ Տեղեկագրովը զայ համար  
սալ առաջի Պատկառելի Ժողովոյ և Ազգին, իր 1900 տարւոյ  
գործունեութեան նկատմամբ :

Հոգաբարձութիւնս շնորհիւ Կայսերական Կառավարութեան այս  
Հաստատութեան մասին սաժամ բարեհաճ պատշաճութեան և Պատ-  
րիարքական Վարչական Ժողովոյ հովանւոյն, և շնորհիւ օժան-  
դակութեան մեղրւաջան կեկին հնամակալութեանց և ազգայնոց ա-  
ռասաձեռն նուիրասուութեանց արդիւնաւոր տարեշջան մը բոլորեց :

Կը ցաւինք ըսել թէ Տիկնանց մեղրւաջան հնամակալութիւնն՝ որ  
այնչափ նպաստաւոր եղաւ մեր պատշտակարութեան առաջին ժամա-  
նակամիջոցին՝ անդամուհեաց զանազան պատկառելի մի առ մի Բա-  
ռուէրուն աղագաւ՝ կորսնցուց իր մեծամասնութիւնը, որով և մնացած

մէկ երկու անգամներն սխալուեցան հրածարիլ . Հոգաբարձութիւնս մտադիր է յառաջիկայ տարւոյն մէջ վերակազմել խնամակալութիւնը որոնց եւ անշուշտ պիտի աջակցին նաեւ վաղեմի խնամակալութեան երբեմն անդամները , որք իրենց փորձառութեամբ մեծապէս պիտի նպաստեն նորերուն գործունեութեան :

Մեր ընկերներէն Համբարձումեան Գառնիկ էֆ. անապարհորութեանց եւ գործոց բերման հետեւանօք սխալուեցաւ հրածարիլ 1899 ին, եւ որոյ տեղ Հոգաբարձութիւնն իբր ընկեր ընտրեց էֆտերեան Պոլոս էֆ.ն գոր եւ վաւերացուց Քաղաքական պատկառելի Ժողովը :

Հաստատութեանս եկամուտներու վրայ մեր նախորդ տարւոյ շրջանի աւելցուցած « վան ծաղկեփունջի » նուէրներն պատկառելի գումար մը առաջ բերին, որպէս կը յուսացուէր , եւ ինչպէս կը տեսնուի մեր հաշուեկէշոնց մէջից բաժնոյն մէջ :

Անցեալ տարւոյ նման նուագահանդէս մը տուեցաւ ի նպաստ Հաստատութեանս, *Իւնիօն Ֆրանսէզի* արահներուն մէջ , աջակցութեամբ երկու մասնախմբի մը եւ օժանդակութեամբ Հայ ու օտարազգի արուեսագէտներու եւ արուեստաւերերու , որ շուրջ 800 ոսկւոյ գումարի նպաստ մը տուաւ մեզ :

Տարւոյս շրջանին ի գործ դրուեցան կարգ մը բարեկարգութիւններ որոնց գլխաւորներն են.

Ա. Զրաբուժական սրահի մը հաստատութիւնը կանանց հիւանդանոցի մէջ :

Բ. Սննդոց բաշխման սպրակի մը շինութիւնը կանանց հիւանդանոցի համար, յար եւ նման արանց կողմինին համար Փարիզէ բերուածներուն :

Գ. *Քերմո-սիֆօնի* կարսայի մը հաստատութիւնը կանանց բաժնոյն մէջ որ 13 ծորակներով սաք ջուր կը մատակարարէ Կանանց Հիւանդանոցի, Սերանոցի, Յիւանդանոցի եւ Աղջկանց Որբանոցին :

Դ. Յիւանդանոցի եւ կանանց կրկին պարտէզներուն մէջ խելագարները արեգական դէմ պատարարելու համար մասնաւոր սաղաւարներու հաստատութիւնը :

Ե. Արանց հիւանդարանի մէջ սնունդները վարի յարկէն վեր հանելու համար վերելակի (ascenseur) մը հաստատութիւնը :

Զ. Ունեցանք Հաստատութեանս աշխատանոցին համար երկու ընտիր մանրացոյցք, մին նուիրեալ Տիար Ռափայէլ Մարկոսեանէ ( ի

յիշատակ Տիկին Ե. Կիւմիւշեփեանի) գոհարալանառ ի Փարիզ , եւ միւսն Տիար Ահարոն Մ. Մանուկեանէ ( ի յիշատակ իւր վաղամեռիկ սիկնոջ ) հաստատել ի Գահիրէ : Տօք. Նաղուպեան էֆ. բարեհաճեցաւ Տօք. Ն. Տաղաւարեանի առաջարկին վրայ՝ նուիրել մի նրբահաս (microtome) գործի :

Է. Որպէս մտադրած էինք՝ մանչերու Որբանոցին մէջ հաստատեցինք դերձակութեան , կահագործութեան եւ ուսայնանկութեան նիւղերն : Առ այժմ կահագործութեան նիւղին մէջ միայն արտուներ կը պատրաստուին (1):

Ը. Հաստատութեանս մի լիակատար Կանոնագրի պատրաստութիւնը , գոր յանձն առաւ կատարել Հաստատութեանս բժշկապետ Տօքր. Ն. Տաղաւարեան էֆ. եւ որ արժանացաւ մեր հաւանութեան ու Պատկառելի Քաղաքական Ժողովոյ կողմանէ վաւերացման :

Թ. Կանանց Յիւանդանոցի խնդրեալ վիճակն ի նկատի առնելով՝ շինեցինք օժանդակ շէնք մը որ 18 անկողիննոց ննջարանի մը վերածուեցաւ :

Ի ծրագրական վիճակի ունիմք եւ յետագայ բարեկարգութիւններն :

1. Վերելակ մը (ascenseur) կանանց Հիւանդարանի մէջ սնունդները վեր հանելու համար :
2. Արանց Յիւանդանոցի համար մասնաւոր ննջատեղակներ :
3. Կանանց Յիւանդանոցի մէջ կատարելներու յատուկ խցիկներ :
4. Հականեխական մեծ ջերոց (étuve) մը (2):
5. Արանց Հիւանդարանի եւ Սերանոցի նեմիւսներուն եւս եւրոպական դրոքեամբ առանց զարժանոսութեան նեմիւսներու վերածումը :
6. Անուշ ջուրի մի երրորդ ընդունարանի շինութիւնն :
7. Հաստատութեանս հրապարակին մի մեծապար պարտէզի վերածումը , ուր կրնան ծուռ գալ հիւանդներն եւ ծերերը :
8. Արանց կողմի *քերմո-սիֆօնի* կանանց կողմինին նման՝ կատարելագործեալ վիճակի վերածումը Ապուշարանի եւ աշխատանոց յիւանդանոց նոր շէնքի եւս անով սաք ջուր մատակարարումն :

(1) Այս եօթը բարեկարգութիւնները արդէն ծրագրուած էին անցեալ տարուին որպէս եւ յիշատակեալ են մեր նախորդ տարւոյ տեղեկագրոյն մէջ :

(2) Այս չորս պէտքերն արդէն անցեալ տարի իսկ զգացուած ու մեր տեղեկագրի մէջ յիշատակուած են, եւ որոց գործադրութիւնն առաջիկայ տարւան մնացին :

8. Լուսարանի ըս վերջին յառաջադիմութեանց՝ կասարելագործեալ վիճակի մը վերածումն :

9. Որբանոցի մէջ առողջապահական դասի մը եւ երկրագործական դասընթացի մը հաստատութիւնը :

Մեծապէս աշխատեցանք չի յաւելուլ Հաստատութեանս պատասխարեւոյ թիւն եւ որք շուրջ հազար եւ միշտ, որոնց 200ը հիւանդ, 300ը յիւար, 300ը որք, 150ը ծեր եւ անկեալ, եւ 50ը ուսանող եւն :

Պատր կը համարինք սոս մեր խորին շնորհակալութիւնը յայտնել Ազնուաբալ Խնամակալութեի Տիկնանց որք քեպէտ հաշուած՝ կը ջանան օգտակար ըլլալ Հաստատութեանս : Հրապարակային շնորհակալութեան արժանի է նաեւ Որբանոցի ժրջան խնամակալութիւնը :

Ինչպէս անցեալ՝ նմանապէս եւ մեր այս տարուոյ շրջանին մէջ վայելեցինք Ապրանեան Յարութիւն ԷՖ . ի օժանդակութիւնը, նամանաւանդ կանանց բաժնոյն *թերմօ-սիփօնի* հաստատութեան նկատմամբ :

Հարկ կը համարինք սոս հրապարակաւ խոստովանիլ եւ Հաստատութեանս բժշկապէտ Տօքր . Ն . Տաղաւարեանի արդիւնաշատ գործունէութիւնն, ոչ միայն իբր խղճահար իր պատշաճան մէջ՝ այլ շատ անգամ իբր հեղինակ եւ առաջարկող շատ մը բարեկարգութեանց :

Մասնաւոր յիշատակութեան արժանի է եւ մեծարգոյ Դամիանոս ԷՖ. Փափագեան՝ որ Որբանոցի մէջ կօշկակարութեան նիւղին հաստատութեան ի վեր հանած է անձնուիրաբար հսկել այդ նիւղի աշխատութեանց : Մասնաւոր յիշատակութեան արժանի են նոյնպէս ծանօթ հարսապէտ Մելիսոսեան ԷՖ. որ միշտ անձնուիրաբար կը ստանձնէ :

Հաստատութեանս շինութեանց հսկողութիւնն եւ Բարսեղ ԷՖ. ~~Պրոֆ.~~ <sup>Պրոֆ.</sup> Երանոսեան որ միշտ հանած է անձնուիրաբար նորոգել Հաստատութեանս վաւարաններն եւ որ այս տարի նուիրեց Տնօրէնութեան յարկի նիւրանոցին համար խիստ նոյս եւ հսկայ վաւարան մը :

Ներկայ Տեղեկագիրս ըս առաջնոյն երեք ուրոյն մասերէ կը բաղկանայ .

Ա. Տեղեկագիր Հաստատութեանս անձնուիր բաժնի . Հիւանդանոց, Յիւարանոց, Որբանոց, Անկեղանոց-Մերանոց, Ուսանող եւ Մոմարան :

Բ. Տեղեկագիր Հաստատութեան օժանդակ յարկերու, Դեղարան Հանդերձատուն, Մատան, Անասնարան, Խոհանոց, Արհեստանոց, Մասուր, Մասնապարան ու Դիւան, Պարտէզ եւ Հրապարակ :

Գ. Տեղեկագիր Հաստատութեանս կալուածոց, գոյից եւ ելեւմտից :


Ներկայս կը կնենք մեր արտաբուրիս շնորհակալութիւնները մասնաւորաբար առ Ազգայինս՝ որք այնչափ վստահութեամբ կը վարուին մեզ հանդէպ եւ իրենց նուերներօք հաջալեր կը կարգան մեր գործունէութեան, եւ առ Պատր . Վարչութիւնը որ իւր հզօր պատշաճութեամբ կը դիւրացնէ մեր գործունէութիւնը :

Չանադիր եմք ու պիտի ջանամք միշտ արժանի մնալ Ազգային եւ վարչական այս մեծ վստահութեան եւ համակիր հանդիսացնել ամենուն այս մեծ Հաստատութիւնը որուն հոգաբարձութիւնը մեզ յանձնելու պատիւն քր.մ է :

Հայցելով միշտ Պատկաւելի Ժողովոյդ աջակցութիւնը, մասչլիք ի համբոյր արբազնած աջոյն Ամենապատիւ Սրբազան Նախագահիդ եւ խնդրեմք ի նմանե օրհնել Հաստատութիւնս եւ զայն մասակարարող նուիրատուներն եւ ազօրել վասն կենաց Օգոստապատ Կայսեր, որոյ հանապազօրեայ շնորհները կը վայելեն Հաստատութեանս համայն պատասխարեալ :

Անկամք Հոգաբարձութեան Եկեք.Գոյի Եւր. Հաստատութեան

Գանձապէտ	Ասենաղաղիւր	Ասենապէտ
ՊՕՂՈՍ ԷՆՔՍԷՐՃԵԱՆ	Գ. Մ. ԱԼԵԱՆԱՔԵԱՆ	ՊՕՏՐԻԿ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ
	Անկամք	
ՏՕՔ. ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆ		ՏԻԳՐԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՏՕՔ. Ա. ՆԱԶԱՐԵԱՆ		Յ. ՍԹԱՄՊՕԼԼՈՒԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ԷՎԼԷՆԵԱՆ		Գ. ԿԻՒՄԻՒՇԿԷՐՏԱՆ



Մ Ա Ս Ն Ա

ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՍ ԶԱՆԱԶԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ա. Է Թ Թ Ա Ն Դ Ա Ն Ո Յ

1. ՆԵՐՔԻՆ ՇԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ԲԱԺԻՆ

1900 Յունուար 1 եւ մինչ 1 Յունուար 1901

Վսեմաշուր / Ասեմապետ ԷՄԵՆՏԻ

Եւ

Պատուարժան Տեախ Անդամք Մեղուաշան Հոգաբարձութեան

Եւսի Գուրի Ազգ. Հաստատութեան

ի Մեծ Նոր Խան

Ազգանուէր և Ժրաջան Տեախք,

Ներկայիւ պատիւ ունիմ մատուցանել Ձեզ իմ պաշտօնավարութեան երկրորդ տեղեկագիրն որ 1900 տարւոյն համարատուութիւնն է :

Ներկայ տեղեկագրոյս համար պիտի հետեւիմ ամենայնիւ նախորդին ծրագրոյն և բաժանմանց՝ որ այնչափ գոհ թողուց զՁեզ, սակայն կրկնութիւններէ խոյս տալու մտօք համառօտակի պիտի անցնիմ այն ամեն մասերն որք նախորդ տարուան վիճակն ունին :

Գ Լ Ո Ի Խ Ա .

Հ Ի Ի Ա Ն Գ Ա Ն Ո Յ

Հիւանդանոցիս բաժանումներն , պաշտօնէութիւնն զբեթէ նոյնն են , ուստի միայն բարեկարգութեանց մասին արժան կը համարիմ հաստատմը դնել աստ :

Բարեկարգութիւնք . — Իբր բարեկարգութիւնք յիշատակութեան արժանի են .

Ա . Կանանց Հիւանդարանի մէջ վիրաբուժական սրահի մը հաստատութիւնն :

Բ . Կանանց Հիւանդարանի համար սննդոց բաշխման սայլակի մը շինութիւնը ճիշդ նման արանց կողմինին համար Փարիզէ բերուածներուն :

Գ . Թերմո-սիֆօնի կաթնայի մը հաստատութիւնը կանանց բաժնոյն մէջ՝ որ տաք ջուր կ' մատակարարէ կանանց Հիւանդարանի , Ծերանոցի , Յիմարանոցի եւ Աղջկանց Որբանոցի :

Դ . Արանց Հիւանդարանի մէջ սնունդներ վեր հանելու յատուկ վերելակ մը (ascenseur) :

Ե . Հաստատութեան աշխատանոցի մանրացոյցերով ե նրբահատով օժտուիլը , ե անոնց շնորհիւ Մանրէաբանական ճիւղի մը հաստատութիւնն :

Որպէս առաջարկած եմք , կը կրկնեմք եւ ներկայիս յետագայ բարեկարգութիւնները .

Ա . Կանանց հիւանդարանի սնունդները վեր հանելու համար վերելակ մը :

Բ . Աշխատանոցի համար մասնաւոր փոքր ջերոց մը :

Գ . Հականեխական մեծ ջերոց մը (étuve) տարափոխիկ հիւանդութեանց ենթարկեալներու անկողնոց , առարկայից ե զգեստեղինաց հականեխման համար :

Դ . Ըրտանկարի գործի մը՝ երբեմն կարելոր հիւանդաց նախկին ե վերջին վիճակները լուսանկարելու համար :

Ե . Աշխատանոցի պետ մը (chef de laboratoire) կարգել ու անոր յանձնել աշխատանոցի քիմիաբանական , մանրէաբանական

ե լուսանկարչական աշխատութիւններն ու բժշկական փորձերն :

Զ . Աչքի , կտորդի եւ ախտնջի հիւանդութեանց բաժին մը ստեղծել :

Է . Արանց Հիւանդարանի ձեմիչներն եւս կանանց կողմինին նման Եւրոպական դրութեան վերածել :

Ը . Արանց կողմի րեւո-սիֆօնն եւս կանանց կողմինին նման կատարելագործեալ վիճակի վերածել :

Գ Լ Ո Ի Խ Բ .

Հ Ի Ի Ա Ն Գ Գ

Հիւանդաց քիւր . — 1900ի տարեշրջանին ներքին հիւանդութեանց բաժնին մէջ դարմանուելով մեկնած են 4105 հիւանդ , իսկ արտաքին կամ վիրաբուժական բաժնոյն մէջ 700 . Ընդ ամէնը 1805 հիւանդ եւ 35 հոգեվարք , որով մտից դուժարն է 1840 սակայն Հաստատութեան Մայր ստմարին մէջ նշանակուած են միայն 1808՝ զի 32 հիւանդներ թէ բժշկական ե թէ վիրաբուժական բաժիններու մէջ իրենց տարբեր հիւանդութեանց համար դարման ընդունած են . զոր օրինակ , յօդացաւի ենթակայ մը այդ հիւանդութենէ բուժուելէ վերջ՝ վիրաբուժական բաժինն կը դիմէ իր մի վաղեմի ուռն հանել տալու փափաքանօք :

Անցեալ տարւոյ շրջանին մէջ Ազգ . Հիւանդանոցն դարմանուած էին 1638 անձինք , որոց 1076ը բժշկական , 562ը վիրաբուժական ե 45 երկու բաժիններու մէջ . այս թիւերն ցոյց տան Հիւանդանոցս դիմողայ թւոյն աճումը :

Այս թիւերուն մէջ չի կան Հաստատութեան բժշկաց կողմանէ սուքի վրայ դարմանուող շատ մը պաշտօնեաներ ե այլ պատրաստութեան բժշկաց խորհրատուութեան դիմողները :

Հիւանդաց սեւր . — Ինչպէս անցեալ տարւոյ Տեղեկագրով կ'ըսէինք՝ հիւանդաց 3/4ը այլ ե 1/4ը կիներ են . այս տարւոյ հիւանդաց սեւին համար ե նոյնը կրնանք բւել . կիներն քիչ անգամ կը դիմեն Ազգ . Հիւանդանոց : Աւստի ըստ սեռի հիւանդաց բաղդատական ցուցակը :

Պատրաստ Ա.յր	90	Կին	13	Գումար	103
Ընդունուած »	835	»	274	»	1109
	<u>925</u>		<u>287</u>		<u>1212</u>

Հիւանդները ո՛ւստի կուգան. — Այս տարուան չըջանին մէջ Հիւանդանոցի ներքին հիւանդութեանց բաժինը դիմող 1109 հիւանդաց 802ը դրսէն եկած են և 307ը Հաստատութեանս դանազան յարկերէն, որք ըստ յետագայ ցուցակին կը բաժնուին.

Որբանոցէն .....	Ա.յր	66	—	Կին	—	44	Գումար	110
Ծերանոցէն .....	»	57	—	»	—	38	»	95
Յիմարանոցէն .....	»	57	—	»	—	23	»	80
Պաշտօնեայ .....	»	18	—	»	—	4	»	22
								<u>307</u>

Հիւանդաց հայրեմիքը. — Ներքին հիւանդութեանց բաժնին մէջ դարմանուած 1105 հիւանդաց 445ը տեղացիներ են, 65էր դրսեցիներ, որոնց աւագ մեծամասնութիւնը Թուրքիոյ դաւառներէն՝ և 6ը օտարազգիներ, Թուրք, Յոյն, Հրեայ:

Հիւանդներու քիւր քս ամսոց. — Այս տարուան չըջանին մէջ մեր սրահները դիմող հիւանդները ըստ մտից ամսոց՝ յետագայ ցուցակով կը պատկերանան.

			Փոխադրեալ	569
Յունուար .....	88	Յուլիս .....		130
Փետրուար .....	97	Օգոստոս .....		71
Մարտ .....	115	Սեպտեմբեր .....		78
Ապրիլ .....	99	Հոկտեմբեր .....		76
Մայիս .....	78	Նոյեմբեր .....		80
Յունիս .....	92	Դեկտեմբեր .....		101
	<u>569</u>			<u>1105</u>

Այս ցուցակի թիւերէն՝ որպէս և նախորդ տարուան նմանօրինակ ցուցակէն դժուարին է որոշ եզրակացութիւն մը հանել. առ այս քանի մը տարիներու թիւերը հարկ են:

Հիւանդաց քարիքն. — Մեր խնամոց յանձնուած հիւանդները ըստ իրենց հասակի յետագայ կերպով կը դասակարգուին.

			Փոխադրեալ	739
1 — 10 տարեկան .....	51	51 — 60 տարեկան .....		171
11 — 20 » .....	197	61 — 70 » .....		130
21 — 30 » .....	157	71 — 80 » .....		45
31 — 40 » .....	145	81 — 90 » .....		18
41 — 50 » .....	189	91 — 100 » .....		2
	<u>739</u>			<u>1105</u>

Ըստ այս ցուցակին ամենէն աւելի հիւանդացողները 11—20 տարեկան դեռատի պատանիներ են: Հաստատութեանս Որբանոցի մէջ այս տարի ճարակուած խոյլականջ (oreillon) հիւանդութիւնը մատակարարած է այս տարիքի հիւանդաց մեծամասնութիւնն, ուստի և բացառիկ թիւ մ'է. անկէ վերջ կուգան 41—50, 51—60 տարեկաններն և յետոյ 21—30, 31—40, 61—70 տարեկաններն: Ծերերու թուոյն նուազութիւնն՝ ինչպէս դիտել կուտայինք անցեալ տարի՝ կենաց տեւողութեան նուազելուն հետեւանքն է:

Անցեալ տարւոյ տեղեկագրաւս դիտել կուտայի թէ ընդհանուր առմամբ դաւառացիներն աւելի երիտասարդ հիւանդներ կը մատակարարեն մեզ, իսկ պոլսեցիներն իրենց ընտանեաց մէջ կը խնամուին և միայն անոնց անտէր ծերերը Ազգին տունը կը դիմեն. սա և մասամբ մեր Հաստատութեան վարկի անկումը կը նշանակէր. բերկրութեամբ կը ծանուցանենք թէ Հաստատութեանս վարկը սկսած է բարձրանալ յաչս ժողովրդեան և Կ. Պոլսեցիք սկսած են աւելի մեծ թուով դիմել մեր Հիւանդանոցը:

Գ Լ Ո Ի Խ Գ.

Հ Ի Ի Ա Ն Գ Ո Ի Թ Ի Ի Ն Գ

Ընդհանուր ցուցակ դարմանեալ հիւանդութեանց. — Յետագայ ցուցակաւ կը ներկայացնենք այս տարւոյ չըջանին մեր սրահներուն մէջ դարմանուած հիւանդութիւններն և անոնց ելքն. ըստ բժշկական գիտութեան դասակարգելով այդ հիւանդութիւնները.

ՅՈՒՅԱԿ ԿԱՐՄԱՆԵԱՆ ԼԻԻԱՆ ԳՈՒԹԵԱՆՑ

Table with columns for disease names and statistics for 1900 and 1901. Includes categories like Rhinitis, Bronchitis, Asthma, and Tuberculosis.

Table with columns for disease names and statistics for 1900 and 1901. Includes categories like Parésie du cœur, Cachexie card., and various types of Gastritis and Enteritis.

	Պրս. 1900	Ընդունված	Բնակարանային	Բժշկական	Բարձրագույն	Արձակատեղ	Մեծացած	Պրս. 1900
Յանկայիտապ (Appendicite) . . . . .	0	2	2	2	0	0	0	0
Աղեղարծ (Occlusion intestinal) . . . . .	0	2	2	1	0	0	1	0
Խիթ աղեղաց (Colique intestinale) . . . . .	0	1	1	1	0	0	1	0
Յամառ պնդուծիւն (Constipation opiniâtre)	0	3	3	3	0	0	0	0
Երկգորդ (Ténia) . . . . .	0	3	3	3	0	0	0	0
Աղեղառոտ (Ascaride lombricoïde) . . . . .	0	3	3	3	0	0	0	0
	14	240	254	186	22	5	30	11
<b>Հ Ի Ի Ա Ն Դ Ո Ի Թ Ի Ի Ն Բ</b>								
<b>ԼԵԱՐԴԻ, ՓԱՅՄԱՂԻ ԵՒ ՈՐՈՂ, ՇՃԱՐԱՂԱՆԹԻ</b>								
Լեարդատապ (Hépatite) . . . . .	0	1	1	1	0	0	0	0
Դմային ղեղնուծիւն (Ictère catarrhale) . . . . .	0	7	7	5	0	2	6	0
Չար ղեղնուծիւն (Ictère grave) . . . . .	0	1	1	0	0	0	1	0
Կորեկակերպ խղկայած լեարդի (Abscess miliaire du foie) . . . . .	0	1	1	1	0	0	0	0
Լեարդային խիթ եւ Հիսթերի (Colique hépatique et Hystérie) . . . . .	0	1	1	0	0	0	0	1
Ծիւրային լեարդախոց (Cirrhose atrophique)	0	5	5	0	2	1	2	0
Խիթ լեարդի (Cancère du foie) . . . . .	0	2	2	0	0	0	1	1
Կերածուժ փայծաղի [ճահճախտի հետեւանօր] Hypertrophie de la rate, suite de palud.)	0	1	1	0	1	0	0	0
Ուռականուծիւն որովայնային շնամաղանի (Péritonite tuberculeuse) . . . . .	1	6	7	0	2	1	2	2
	1	25	26	7	5	4	6	4
<b>Հ Ի Ի Ա Ն Դ Ո Ի Թ Ի Ի Ն Բ</b>								
<b>ՄԻՋԱՅԻՆ ԵՒ ԾՆՆԴԱԿԱՆ ԿՈՐԾԱՐԱՆԱՅ</b>								
Սուր երկկամատապ (Nephrite aiguë) . . . . .	0	10	10	8	2	0	0	0
Երկարատեւ երկկամատապ (Nephrite chron.)	5	19	24	0	11	2	7	4
Ծփեբրիկամ (Reine mobile) . . . . .	0	1	1	0	0	1	0	0
Կարծրացում երկկամանց (Sclérose rénale) . .	0	1	1	0	0	1	0	0
Միզածիւնարուժ (Urémie) . . . . .	0	1	1	0	0	1	0	0
Միզարար (Lithiase urinaire) . . . . .	0	1	1	1	0	0	0	0
Փամիշտատապ (Cystite) . . . . .	0	1	1	0	1	0	0	0
Կերածուժ շագանակագեղձի (hyp. de la prost.)	1	1	2	1	0	1	0	0
Անմիզակալութիւն (Incontinence d'urine) . . .	0	1	1	0	1	0	0	0
Ջրային յաճախամիզութիւն (Pollakiurie nerv.)	0	1	1	0	0	1	0	0
Երազափորձութիւն (Pollution nocturne) . . .	0	1	1	1	0	0	0	0
Սերմամիզութիւն (Spermatorrhée) . . . . .	0	3	3	2	1	0	0	0
Ջուլափողատապ (Salpingite) . . . . .	0	1	1	1	0	0	0	0
Դաշտանատուծիւն եւ Դժուարաղաշտան (Amé- norhée Dysménorrhée) . . . . .	2	0	2	0	2	0	0	0
Դաղարի խանգարմունք (Trouble de la ménop.)	1	1	2	0	2	0	0	0
	0	1	1	0	1	0	0	0
	9	43	52	14	21	6	7	4

	Պրս. 1900	Ընդունված	Բնակարանային	Բժշկական	Բարձրագույն	Արձակատեղ	Մեծացած	Պրս. 1901
<b>ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ ԶՂԱՅԻՆ ԴՐՈՒԹԵԱՆ</b>								
Ուղեղային արիւնակուտում (Congestion céréb.)	0	6	6	1	0	0	5	0
Ուղեղային անարիւնութիւն (Anémie cérébrale)	0	2	2	1	0	0	0	1
Ուղեղային արիւնահոսութիւն (Hémorrh. cér.)	0	4	4	1	0	0	3	0
Ընդհանուր անդամալուծութիւն (Paralysie gén.)	1	6	7	0	1	1	1	3
Ուղեղային կակղութիւն (Ramolissement céréb.)	0	2	2	0	1	0	1	0
Ուղեղային ֆրանկախոց (Syphilis cérébrale)	0	2	2	0	0	0	2	0
Ողնուղատապ թիկանց (Myélite dorsale) . . . .	0	1	1	0	0	1	0	0
Պոտի հիւանդութիւն (Mal de Pott) . . . . .	0	1	1	0	0	0	1	0
Ֆրանկախոցային ողնուղատապ (Myélite syphil.)	0	1	1	1	0	0	0	0
Երկարատեւ ողնուղատապ (Myélite chronique)	3	4	7	1	0	2	2	2
Ընթացային անկանոնութիւն (Ataxie locomot.)	2	6	8	0	4	1	0	3
Կիսահարութիւն (Hémiplégie) . . . . .	2	30	37	2	18	7	6	4
Միջնահարութիւն (Paraplégie) . . . . .	2	1	3	1	1	0	0	1
Մասնահարութիւն (Monoplégie) . . . . .	0	2	2	0	1	0	0	1
Անդամալուծական ախտաճէտութիւն (Cachexie paralytique) . . . . .	0	3	3	0	0	0	3	0
Կաթուած. Խօլութիւն (Démence apopléptique)	0	4	4	0	0	1	3	0
Չղացաւուծիւն զիստաջղի (Névralgie sciatique)	1	14	15	10	3	1	0	1
Արտաջղատապ (Névrite périphérique) . . . . .	1	1	2	2	0	0	0	0
Քաղցկեղ արտաջղատապի հետեւանօր (Cang- rène suite de périnévrite) . . . . .	0	1	1	0	0	0	1	0
	17	91	108	20	29	14	29	16
<b>ՉՂԱԿԴԴՈՒԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ</b>								
Անգար (Migraine) . . . . .	0	1	1	1	0	0	0	0
Չլիստութիւն (Névrosthénie) . . . . .	1	16	17	3	9	4	0	1
Լուսնոտութիւն (Épilepsie) . . . . .	2	5	17	3	1	2	0	1
Լուսնոտական բացատութիւն (Absence épilep.)	0	1	1	1	0	0	0	0
Հիստերի (Hystérie) . . . . .	1	16	17	6	9	1	0	1
Սուր զաւանցանք (Délire aiguë) . . . . .	0	1	1	0	0	0	1	0
Դողդոջական զաւանցանք (Délirium trémens)	1	1	1	1	0	0	0	0
Ծամեկալծկում կարկամութեան (Trismus de tétanie) . . . . .	0	1	1	1	0	0	0	0
Ջրային անքնութիւն (Insomnie nerveuse) . . .	0	1	1	1	0	0	0	0
Ջրայնութիւն (Névrosisme) . . . . .	0	3	3	1	1	0	0	1
Ջրային դողդոջ (Tremblement nerveux) . . . .	0	1	1	0	0	0	0	1
Յնցական անդամալուծութիւն (Paralysie agit.)	0	1	1	0	0	0	1	0
Ջրագրգռական սննդատուութիւն (Trophonévrose)	0	3	3	0	1	0	0	2
	4	51	55	18	21	7	2	7
<b>ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ ՇԱՐՃԻԶ ԿՈՐԾԱՐԱՆԱՅ</b>								
Կերածնակերպ ջլատում մկանանց (Paralysie musculaire pseudo-hypertrophique) . . . . .	1	0	1	0	1	0	0	0
Սուր յօդատապ (Rhumatisme art. aiguë) . . .	0	32	32	32	0	0	0	0
Երկարատեւ յօդատապ (Rhumatisme chronique)	3	11	14	0	10	0	1	4
Մկնացաւ (Rhumatisme musculaire) . . . . .	0	2	2	2	0	0	0	0



	ՊՏՐՍ. 1900	ԸՆԴՈՒՆՈՒԹՅՈՒՆ	ԲՆՈՒՄ	ԲԱՐՈՒՖԿԱԼ	ԱՐՃԱԿԵՎԱԼ	ՄԵՆԵՎԱԼ	ՊՏՐՍ. 1901
<b>Յողացաւային կարկամումն պարանոցի (Torticolis rhumatismal)</b>	0	2	2	1	1	0	0
<b>Կոստուր (Courbature)</b>	1	33	34	34	0	0	0
<b>Միջացաւ (Lumbago)</b>	1	3	3	3	0	0	0
<b>Ուռական ազդրացաւ (Coxalgie bacillaire)</b>	1	0	1	0	1	0	0
<b>Ուռացաւու թիւն (Tarsalgie)</b>	0	1	1	0	0	1	0
<b>Կողացաւու թիւն (Pleurodinie)</b>	0	3	3	3	0	0	0
<b>Յողաջրզողու թիւն (Hydrarthrose)</b>	0	1	1	1	0	0	0
<b>Մասունկային յօղատապ (Arthrite fungueuse)</b>	0	1	1	0	0	0	1
	6	89	95	76	13	1	5
<b>ԸՆԴՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԶԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ</b>							
<b>Ջրծաղիկ (Variole)</b>	0	1	1	1	0	0	0
<b>Սուտ ծաղիկ (Varioloïde)</b>	0	3	3	3	0	0	0
<b>Կարմրուկ (Scarlatine)</b>	0	1	1	1	0	0	0
<b>Խոլլականջ (Oreillon)</b>	0	20	20	20	0	0	0
<b>Ժանտատենդակերպ ջերմ (Fièvre typhoïde)</b>	1	5	6	4	0	0	2
<b>Ընդհատաջերմ (Fièvre intermittente)</b>	1	7	8	8	0	0	0
<b>ձահնաժէտու թիւն (Impaludisme)</b>	0	2	2	1	1	0	0
<b>Համազուժ (Grippe)</b>	1	14	15	11	1	0	3
<b>Թագնաջերմ (Fièvre larvée)</b>	0	1	1	1	0	0	0
<b>Ինքնաթունաւորում ժանտատենդակերպ ջերմի հետեւանօր (Intox. suite de fièvre typh.)</b>	0	1	1	0	0	1	0
<b>Դոճուլամուրու թիւն (Alcoolisme chronique)</b>	0	1	1	0	1	0	0
<b>Ջղային աստածէտու թիւն (Cachexie nerveuse)</b>	0	1	1	0	0	0	1
<b>Ընդհանրացեալ ուռականութիւն (Tuberculose généralisée)</b>	0	15	15	0	2	1	12
<b>Մշտահոսականութիւն արեան (Hémophilie)</b>	0	2	2	2	0	0	0
<b>Սակաւարիւնութիւն (Anémie)</b>	1	18	19	15	2	0	0
<b>Շարքամիզութիւն (Glycosurie)</b>	0	8	8	1	4	0	2
<b>Խոզակտ (Scrofule)</b>	1	1	2	0	2	0	0
	5	101	106	68	13	4	16
<b>ԱՓՐՈՂԻՏԵՍՆ ԶԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ</b>							
<b>Ջերմամզութիւն (Blennorrhagie)</b>	0	2	2	2	0	0	0
<b>Ջերմամզային ամորձատապ (Orchite blennor.)</b>	0	2	2	2	0	0	0
<b>Կովպերատապ (Covpérite)</b>	0	1	1	1	0	0	0
<b>Անձկութիւն մզուկի ջերմամզութեան հետեւանօր (Ret. uretral blennorrhagique)</b>	0	1	1	1	0	0	0
<b>Ֆրանկախտ շրջ աստիճանի (Sypillis second.)</b>	0	1	1	0	0	0	1
<b>Կարծր չարակեղ վարոցի (Chancre induré de la verge)</b>	0	1	1	1	0	0	0
<b>Կարծր չարակեղ սրբանի (Chan. ind. de l'anus)</b>	0	1	1	0	0	1	0
<b>Սուտիչ չարակեղ (Chancre phagédénique)</b>	0	1	1	1	0	0	0
<b>Ֆրանկախտ երրորդ աստիճանի (Sypillis tert.)</b>	3	11	14	7	6	1	0
<b>ժառանգական ֆրանկախտ (Hérédo-sypillis)</b>	0	2	2	1	1	0	0
	3	23	26	16	7	2	1

	ՊՏՐՍ. 1900	ԸՆԴՈՒՆՈՒԹՅՈՒՆ	ԲՆՈՒՄ	ԲՆՈՒՄ	ԲԱՐՈՒՖԿԱԼ	ԱՐՃԱԿԵՎԱԼ	ՄԵՆԵՎԱԼ	ՊՏՐՍ. 1900
<b>ՄՈՐՔԱՅԻՆ ԶԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ</b>								
<b>Ընդհանրացեալ կրգէմա (Exéma généralisée)</b>	0	6	6	4	1	0	0	1
<b>Գոս (Gale)</b>	0	8	8	5	0	0	0	3
<b>Գոնջ (Favus)</b>	0	3	3	2	0	1	0	0
<b>Նաղկեպար (Acnée)</b>	0	1	1	1	0	0	0	0
<b>Ընդհանրացեալ մկնուութիւն (Furonculose gén.)</b>	0	2	2	2	0	0	0	0
<b>Մորթարոս (Lichène)</b>	0	1	1	1	0	0	0	0
<b>Գոտեակ (Zona)</b>	0	1	1	1	0	0	0	0
<b>Հարուածակէրբ (Contusion)</b>	0	1	1	1	0	0	0	0
<b>Գայլցաւ դիմաց (Lupus de la face)</b>	0	1	1	0	0	0	0	1
	0	24	24	17	1	1	0	5
<b>ՉԱՆՍԱԶԱՆ ԶԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ</b>								
<b>Արեւահարութիւն (Insolation)</b>	0	5	5	5	0	0	0	0
<b>Մորփետամուրութիւն (Morphinomanie)</b>	0	2	2	0	2	0	0	0
<b>Սննդական թունաւորում (Intox. alimentaire)</b>	0	2	2	2	0	0	0	0
<b>Ծերուութեան տկարութիւն (Faiblesse sénile)</b>	0	10	10	3	6	0	0	1
<b>Ծերութիւն (Sénilité)</b>	5	26	31	0	4	1	23	3
<b>Ծերութեան խելայեղութիւն (Démence sénile)</b>	0	3	3	0	0	0	2	1
<b>Տկարամուրութիւն (Imbécilité)</b>	0	2	2	0	0	0	0	2
<b>Սեւամաղձութիւն (Mélancolie)</b>	0	1	1	0	0	1	0	0
<b>Բնախոսական թշուառութիւն (Myèrre physiol.)</b>	0	1	1	0	0	1	0	0
<b>Կեղծ հիւանդ (Simulation)</b>	0	2	2	1	0	1	0	0
	5	54	59	11	12	4	25	7
<b>Յուցակիս իւրաքանչիւր հիւանդութեանց խումբի տուած գումարներն իրարու վրայ բարդելով կ'ունենանք</b>	103	1109	1212	531	289	73	212	107

Այս ցուցակէն կը տեսնուի թէ՛ այս տարւոյ շրջանին մէջ դարմանուած 1212 հիւանդաց 531ը կատարելապէս բժշկուած են, 289ը բարւոքած, 73ը առանց կարելոր փոփոխութեան արձակուած և 212ը մեռած են, ու 1901 Յունուար 1ին կային 107 անձեր պատրաստ և ի դարմանի:

Մորթային և Ափրոզիտեան հիւանդութեանց ենթարկելոյ միայն անոնք կ'ընդունին՝ որոնց ոտքի վրայ դարմանումը հրեար չէ. այս է անոնց սակաւութեան շարժառիթը:

Մեծ պակաս մը լեցուցած պիտի ըլլայ Պատ. Հոգաբարձութիւնը եթէ հաճի աչքի, ականջի և կոկորդի հիւանդութեանց

յատուկ դարմանարածիւններ աւելցնել, որպէս առաջարկած էի արդէն անցեալ տարի: Գիտէք թէ այդ կարգի հիւանդներն չենք ընդունիր ընդհանրապէս, եւ երբ ստիպուինք ընդունիլ՝ զայնս քաղաքի մասնագիտաց կը յղեմք պարբերաբար:

Յանախուրիւն հիւանդութեանց. — Վերոգրեալ ցանկը ըստ հիւանդութեանց դասակարգին համառօտելով կ'ունենանք յետագայ ցուցակը.

		Փոխադր.	847
Շնչառ. գործր.	հիւանդ.	303	Ջրադրդութիւն հիւանդութ.
Արեան շրջանի	»	104	Շարժիչ գործարանաց
Մարտոզական գործ.	»	254	Ընդհանուր
Լեարդ, փայծաղ, եւն.	»	26	Ափրոզիտեան
Միզային և ծննդ. գործր.	»	52	Մորթային
Ջրային դրութիւն հիւանդ.	»	108	Չանաղան
		847	1212

Այս ցուցակէն կը տեսնուի թէ մեր բաժնոյն մէջ դարմանուած հիւանդութեանց աւագ մեծամասնութիւնը շնչառուարական և մարտոզական գործարանաց կը վերաբերին, եւ ինչպէս դիտել տուինք անցեալ տարի՝ այս երկու դասակարգի հիւանդութեանց գումարն՝ ամբողջ հիւանդաց թուոյն կէսը կը ներկայացնէ. ապա կուգան Ջրային դրութեան, Արեան շրջանի և Շարժիչ գործարանաց հիւանդութիւնք՝ որոնց գումարը հիւանդութեանց  $\frac{1}{4}$ ը կը ներկայացնեն, եւ մնացեալները միայն  $\frac{1}{4}$ ն:

Հիւանդութիւնները մասնաւորաբար առնելով իրենց յաճախութեան կարգաւ ըստ յետագային կը դասակարգուին. Թոքային ուռականութիւն (152), Յնցղատապ (66), Սուր աղետապ (49), Սրտի հիւանդութիւնք (79), Կիսահարութիւն (37), Կտարաւք (34), Սուր յօգատապ (32), Ծերութիւն (31), Ուռական աղետապ (27), Կրճիմն որկորի (26): Այս տասն հիւանդութիւններու թիւն մօտաւորապէս նոյնն են անցեալ տարուան թիւերուն, եւ որոց գումարն՝ ամբողջ դարմանելոց (1212) գրեթէ կէսն (533) կը ներկայացնէ:

Դասակարգութիւն հիւանդութեանց ըստ իրենց տեսակաւորութեան. — Հիւանդութիւններն իրենց տեսակաւորութեան տեսակէտով երեք դասի (սուր, տեւական և հօգեվարք) բաժնելով կ'ունենանք

Սուր հիւանդութիւնք	544
Երկարատեւ հիւանդութիւնք	561
	1105
Հօգեվարք	35
	1140

Հիւանդանոցիս պատուարան մը և անկեղանոց մը միանգամայն ըլլալն կը բացատրէ երկարատեւ հիւանդութեանց ենթարկելոց բազմութիւնն:

Տեսողութիւն հիւանդութեանց. — Այս տարւոյ շրջանին մեր սրահներու մէջ դարմանեալ հիւանդաց 1105 ը մեկնած են իբր բժշկեալ, բարուքեալ, արձակեալ կամ մեռեալ. արդ՝ անոնց Հիւանդանոց անցուցած օրերուն գումարն է 37,545 օր, որով իւրաքանչիւր հիւանդ միջին հաշուով 33  $\frac{1}{2}$  օր մնացած է Հիւանդանոցս: Անցեալ տարուան միջինն էր 31 օր:

Մեր անցեալ տարւոյ տեղեկագրոյն մէջ տուած ենք այս տեսողութեանց երկարութեան պատճառներն զորս աւելորդ կը համարինք կրկնել աստ:

Անցեալ տարւոյ նման գաղափար մը տարու համար թէ՛ ումանք մինչեւ որչափ երկար ժամանակ կը մնան Ազգ. Հիւանդանոցի մէջ, յետագայ ցուցակաւ կը պատկերացնենք 100 օրէ աւելի մեր սրահներու մէջ մնացողներու ցանկը:

	Գումար	Միջին
32 հոգի 100 — 150 օր =	3833 օր	119 օր
8 » 150 — 200 » =	1356 »	169 »
12 » 200 — 300 » =	2789 »	232 »
6 » 300 — 400 » =	2044 »	380 »
1 » 407 » =	407 »	407 »
1 » 797 » =	797 »	797 »
60	11,226	187

Այս 60 անձեր միայն 11,226 օր մնացած են և կամ իրարու վրայ իւրաքանչիւրը 187 օր, որ մեծապէս կը բարձրացնէ ընդհանուրին Հիւանդանոց մնացած օրերու միջինը: Արդ 1105 հի-

անդայ թիւէն հանելով այս 60 երկարամնացները (1105—60=1045) և ընդհանուրին Հիւանդանոց մնացած օրերուն գումարէն (37545)՝ այդ 60 անձանց Հիւանդանոց մնացած օրերու գումարն (11,226)՝ կ'ունենանք 1045 անձերու համար (37545.—11226) 26319 օր, որ մեզ կուտայ  $\frac{26319}{1045} = 25,18$  օրուան միջին մը՝ որ գոհացուցիչ կրնայ համարուիլ :

Անցեալ տարուան նմանօրինակ հաշիւներու միջինն էր 23 $\frac{1}{2}$  օր :

Գ Լ Ո Ի Խ Գ .

ԱՐԳԻՒՆՔ ՀԻՒԱՆԳԱՆՈՑԻ

Ընդհանուր ցուցակ.—Այս տարւոյ շրջանին ներքին հիւանդու-  
թեանց բաժնին հիւանդաց ելեւմուտքն կը ներկայացնէ յետագայ  
ցուցակն .

ՊԱՏՐԱՍ 1900 ՅՈՒՆՈՒՐ 1

	Այր 90	Կին 13	Գումար	103
	ՄՈՒՏՔ			
Դրոէն	Այր 637 —	Կին 165 —	Գումար	802
Որբանոցէն	» 66 —	» 44 —	»	110
Պաշտօնեայ	» 18 —	» 4 —	»	22
Մերանոցէն	» 57 —	» 38 —	»	95
Յիմարանոցէն	» 57 —	» 23 —	»	80
				1112
	ԵԼՔ			
Բժշկեալ	Այր 411 —	Կին 120 —	Գումար	531
Բարուքեալ	» 224 —	» 65 —	»	289
Արձակեալ	» 46 —	» 27 —	»	73
Մեռեալ	» 158 —	» 54 —	»	212
				1105
Պատրաստ	Այր 69	Կին 38	Գումար	107
				1212

Այս ցուցակէն կը տեղեկանանք թէ խնամեալ 1212 հիւանդաց 531ն կատարելագէտ աւողջացած են, 289ը բարուքեալ, 73ն աւանց մեծ բարեփոխութիւն մը կրելու թողուցած են Հիւանդանոցն, 212ն մեռած են, իսկ 107ը դեռ ի դարմանի են 1901 ի Յունուար 1ին .

Ո՞ր ամսոց մեզ աւելի մահ կը պատահի. — Նշանակենք ի ստորեւ իւրաքանչիւր ամսոց մահերու թիւերն :

	Փոխադր.	90	Փոխադր.	142	
Յունուար	24	Մայիս	12	Սեպտեմբեր	10
Փետրուար	22	Յունիս	15	Հոկտեմբեր	15
Մարտ	24	Յուլիս	16	Նոյեմբեր	17
Ապրիլ	20	Օգոստոս	19	Դեկտեմբեր	18
	90		152		212

Այս թիւերն հեռի են որ եւ է որոշ դիտողութիւն ներշնչելու, որպէս կ'ըսէի անցեալ տարի քանի մը տարիներու միջիններն հարկ են որ եւ է եզրակացութեան հանդէտ համար :

Մեռելոց սեռը. — Վերոգրեալ ընդհանուր ցուցակէն կը տեսնուի թէ 212 մահերու 158ն այր են եւ 54ը կին : Արդ մեր դարմանած 1105 հիւանդաց 839ն այր եւ 266ը կին են, ուստի

$$839 \text{ այր } 158 \text{ մահ } \%_0 = 18,39$$

$$266 \text{ կին } 54 \text{ մահ } \%_0 = 20,26$$

Միջին հաշուով այրերը  $\%_0$  18 մահ տուած են և կիները 20.

Կանանց մահերու առաւելութիւնն դիւրաւ կը բացատրուի նկատի առնելով իզական սեռէ աւելի պառաւներու Հիւանդանոցս դալն, որպէս դիտել տուինք արդէն :

Մեռելոց սարիքը. — Մեռելները ըստ իրենց հասակի դասակարգելով կ'ունենանք

	Փոխադրեալ	107	
1—10 .....	2		
11—20 .....	14	51—60 .....	37
21—30 .....	29	61—70 .....	44
31—40 .....	23	71—80 .....	18
41—50 .....	39	81—90 .....	6
	107		212

Այս ցուցակն ինքնին որ և է որոշ եզրակացութիւն չիտար, առանց բաղդատելու իւրաքանչիւր հատակի մահերն այդ տարիքով հիւանդներու թուոյն հետ՝ ըստ յետադայ ցուցակին:

Տարի	Թիւ հիւանդաց	Մահ	Համեմատութիւն
1— 10	51	2	3,92
11— 20	197	14	7,10
21— 30	157	29	12,41
31— 40	145	23	15,86
41— 50	189	39	20,63
51— 60	171	37	21,63
61— 70	130	44	33,84
71— 80	45	18	40,00
81— 90	18	6	33,33
91—100	2	2	100,00

Այս բաղդատական ցուցակն կը ցուցնէ թէ մահերը գրեթէ տարիներու հետ կ'աճին: Այս եզրակացութիւնը բնական կրնայ համարուիլ:

Մեռեալք բազմաթիւ հիւանդութեանց. — Հիւանդութեանց իւրաքանչիւր դասակարգին տուած մեռեալներն յետադայ ցուցակու կը պատկերացնեմք:

	Մահ
Շնչառետարական գործարանի հիւանդութիւնք	(303) 73
Արեան շրջանի » »	(104) 24
Մարտոզական » »	(254) 30
Լեարդի, Փայծաղի, Որովայնի, ևլն »	(26) 6
Մզային և Մենդական գործարանաց »	(52) 7
Ջզային դրութեան »	(108) 29
Ջզադրգոական »	(55) 2
Շարժիչ գործարանաց »	(95) 0
Ընդհանուր »	(106) 16
Ափրոզխտեան »	(26) 0
Մորթային »	(24) 0
Չանազան »	(59) 25

Այս ցուցակէն որ և է եզրակացութիւն հանելը կարելի չէ, ուստի մասնացոյց ընենք միայն աւելի մահաութի հիւանդութիւնները ու դասաւորենք զայնս իրենց վտանգաւորութեան կարգով: Աստ պիտի նշանակենք միայն այն հիւանդութիւններն որոնցմէ 5էն աւելի ունեցած ենք:

Ուղեղային արեւակուտում	6—5= 0/0 83,33
Ուռականութիւն աղեաց և շճամիջի	6—5= 0/0 83,33
Տեւական աղետապ	6—5= 0/0 83,33
Ախտածէտութիւն սրտախտի	5—4= 0/0 80,00
Ընդհանրացեալ ուռականութիւն	15—12= 0/0 80,00
Ծերութիւն	31—23= 0/0 74,19
Սրտի խոյրածեւ անցից և մայր շնչեր. հիւանդ.	5—3= 0/0 60,00
Թոքային արեւակուտում	5—3= 0/0 60,00
Ուռական աղետապ	27—14= 0/0 51,85
Ծիւրական լեարդախտ	5—2= 0/0 40,00
Թոքային ուռականութիւն	152—60= 0/0 39,47
Ժանտատեւդակերպ ջերմ	6—2= 0/0 33,33
Երկարատեւ երկիւմատապ	24—7= 0/0 29,16
Ընդհանուր անդամալուծութիւն	7—2= 0/0 28,57
Երկարատեւ ողնուղատապ	7—2= 0/0 28,57
Ուռականութիւն որովայնային շճաթաղանթի	7—2= 0/0 28,57
Անբաւ. սրտի խոյրածեւ անցի. և անց. մայր շնչ.	7—2= 0/0 28,57

Մեռեալները եթէ դասակարգենք ըստ իրենց հիւանդութեանց տեւականութեան՝ կ'ունենանք

Սուր հիւանդութիւնք	544— 22=3,67
Երկարատեւ հիւանդութիւնք	561—190=33,86
Հոգեւարք	35—35

Այս ցուցակէն կը տեսնուի թէ սուր հիւանդութիւններէ քիչեր (0/0 3,67) միայն կը մեռնին, և մահացելոց ստուար մեծամասնութիւնը երկարատեւ հիւանդութեանց ենթարկեալներն են:

Ո՞ր հիւանդներն աւելի մահ կուճան. — Հոգեվարքներէն ետք որք թաղուելու համար հիւանդանոց կը բերուին, կուզան Հաստատութեանս Ծերանոցի եւ Յիմարանոցի պատասարեալները՝ որք

չատ անգամ մահամերձ Հիւանդանոց կը բերուին. այդ յարկերն մեռնելու դատապարտելոց միջերանոցներ կրնան համարուիլ: Վերջացող տարւոյ շրջանին մէջ ունեցանք

Հոգեւարք	35	
Ծերանոց	32)	62
Յիմարանոց	30)	
	<u>97</u>	

Մահերը ի՞նչպէս կը բաժնուին. — Մեր սրահաց մէջ տեղի ունեցած 212 մահերէն 146ը դրսէն եկածներ են, 32ը Ծերանոցէն, 30ը Յիմարանոցէն եւ 2ը պաշտօնեայ, զորս յետագայ ցուցակաւ կը ներկայացնենք:

Դրսէն	Այր	119	—	Կին	27	—	Գումար	146
Պաշտօնեայ	»	2	—	»	—	—	»	2
Ծերանոց	»	15	—	»	17	—	»	32
Որբ	»	1	—	»	1	—	»	2
Յիմար	»	21	—	»	9	—	»	30
		<u>158</u>			<u>54</u>			<u>212</u>

Մեռեալներու համեմատութիւնը. — Մեր սրահաց մէջ դարմանեալ 105 հիւանդաց վրայ 212 մահ ունեցած ենք, ըսել է  $\frac{105}{212} = 49.48\%$ : Իսկ եթէ ձերերն ու յիմարներն ալ հանեմք որք մեռնելու համար կուգան մեր սրահներն եւ մեր վիճակացոյցներն կը ծանրարեանեն՝ կ'ունենանք  $212 - (32 + 30) = 152$  մահ,  $1105 - 62 = 1043$  հիւանդներու վրայ այսինքն  $\frac{1043}{152} = 68.61\%$ :

Իսկ եթէ Հիւանդանոցիս վերաբուժական և բժշկական բաժիններն դիմող հիւանդաց ամբողջական թիւն  $(1105 + 700) = 1805$  համեմատութեան դնեմք ընդհանուր մահերու թուոյն հետ  $(212 + 31) = 243$ , կ'ունենամք  $\frac{243}{1805} = 13.46\%$  մահականութիւն մը:

Իսկ եթէ հոգեվարքներն ալ առնեմք կ'ունենամք  $\frac{243 + 35}{1805 + 35} = 13.46\%$  մահականութիւն մը: Բազմաառութեան դընելով այս վերջին մի քանի տարիներու միջիններն՝ օր քան զօր աւելի լաւ արդիւնքներ տրուիլն երեւան կուգայ:

1897ին $\frac{1}{100}$	16,51	1899ին $\frac{1}{100}$	16,97
1898ին $\frac{1}{100}$	19,37	1900ին $\frac{1}{100}$	15,40

Տեղեկագիրս կնքելու՝ պարտք կը համարիմ իմ մասնաւոր գոհունակութիւնս յայտնել իմ Պատ. պաշտօնակցիս, Տօք. Զարդարեան էֆէնտիի իր համերաշխ գործակցութեան եւ աջակցութեան համար, և շնորհակալութիւնս Հաստատութեանն օժանդակ բժշկաց և նամանաւանդ օգնականիս Տօք. Իւլիկէեան էֆէնտիի՝ որ այնչափ ազնուութեամբ ու անձնուիրութեամբ կ'օժանդակէ մեզ ու կը դիւրացնեն մեր գործունէութիւնս:

Պարտ կը համարիմ եւ հրապարակաւ իմ շնորհակալութիւնս յայտնել Զեղ, Աղնուաշուք Տեարք, վասն այն վստահութեան որ ունիք իմ վրայ ու բարեացակամութեան որով կ'ունկնդրէք բոլոր առաջարկներս և ջանադիր կ'ըլլաք դիւրացնել իմ գործունէութիւնս:

Ընդունեցէք, խնդրեմ և այս առթիւ, Պատուարժան Տեարք, իմ ամենախորին յարգանացս հաւաստին:

Տեօուչ Հիւանդարանի

և

Բժշկապետներին հիւանդութեանց բաժնոյն

ՏՕԲ. Ն. ՏԱՂԱՒԱՐՅԱՆ

15 Յունուար 1901

Աղգ. Հիւանդանոց եէտի Գուլէի



## 2. Վ Ի Բ Ա Բ ՈՒ Ժ Ա Կ Ա Ն Բ Ա Ժ Ի Ն

1900 Յունուար 1-ին մինչև 1900 Դեկտեմբեր 31

Վսեմաշուք Ա. Եսենասյես Եմենի

և

Պատուարժան Անդամք Հոգաբարձութեան

Եկեի Դուրեի Ազգ. Հիւանդանոցին

Մեծ Նոր խան

Ազնուաշուք Տեա՛րք,

1900 Յունուար 1-է մինչև 1900 Դեկտ. 31, վերաբուժական բաժնին մէջ ընդունած ենք ընդ ամէնը 698 հիւանդ, որուն վրայ նախորդ տարիէն մնացած 64 հիւանդներն ևս աւելցնելով 762 ամբողջական գումարը կ'ունենանք: Այս թիւէն 62ը տակաւին դարմանումի ներքեւ կը գտնուին, որոնք 1901ի հաշույն պիտի անցուին: Հետեւաբար, այս վերջինները հանելով ամբողջական գումարէն, մի միայն 700 հիւանդի վրայ պիտի ըլլան մեր տուած տեղեկութիւնները:

Հիւանդաց սեռն ու տարիքը վերաբուժական տեսակէտով խիստ կարեւոր է: Արդ՝ 700 հիւանդներէն 524ը այր և 176ը կին են. իսկ անոնց տարիքին զանազանութիւնը յետագայ ցուցակին մէջ նշանակուած է:

1—10 տարեկան	89	Փոխադրեալ	565
10—20 »	110	50—60 տարեկան	82
20—30 »	161	60—70 »	39
30—40 »	97	70—80 »	11
40—50 »	108	80—90 »	3
	565		700

Ինչպէս այս ցուցակէն կը տեսնուի, ամենէն աւելի չափահասներն են որ առարկայ կը ըլլան վերաբուժական խնամոց, ինչ որ ընկերային տեսակէտէն դատելով աննշան երեւոյթ մը չէ:

Այս տարուան մէջ ընդունուած հիւանդներուն թիւը՝ նախորդ տարուանէն աւելի է: Այս հաշուով՝ 1899ին ընդունուած հիւանդաց թիւն էր 566, մինչդեռ այս տարի 700 է, ինչ որ 134 հիւանդի առաւելութիւն մը ցոյց կուտայ:

Ի մի բան, կրնայ ըսուիլ թէ վերաբուժական բաժինը լաւ վիճակի մէջ է, այլ դժբաղդարար լաւ չնշանակեր կատարեալ, ու միշտ ընելիք բան կայ: Եւ որովհետեւ Պատ. Հոգաբարձութիւնը միշտ յօժարակամութիւն ցոյց կուտայ գործադրել մեր խընդիրքները՝ կարելիութեան սահմանին մէջ, կարի երախտապարտ պիտի ըլլամ եթէ հաճի նկատողութեան առնել՝ մեծ ջերոցի (étuve) մը պէտքը՝ որ անհրաժեշտ է հականեխելու համար անկողինները՝ իրենց յարակից մասերով, հիւանդաց ճերմակեղէններն ու վերարկուները, վասն զի ներկայ ժամանակիս մէջ բժշկութիւնը մանրէներու վրայ հիմնուած է: Առանց այս գործիքին՝ գրեթէ անկարելի պիտի ըլլայ մեզ արդիւիւ տարափոխութիւնը ու վարակումը հիւանդութեանց:

Մտնենք հիմա բուն իսկ վերաբուժական խնդրոյն մէջ: 700 հիւանդաց ամենքն ալ գործողութեան ենթարկուած չեն. ասոնցմէ մէկ մասը զեղերով դարմանուած է, մէկ մասին ալ վէրքը միայն դարմանուած է առանց գործողութեան: Վերջապէս կան որ իրենց հաճութեամբ մեկնած են յարկէս, ոմանք ալ հեռացած են՝ իրենց արտին անբուժելիութիւնը նկատի առնելով:

Արդ՝ 700 հիւանդներէն, իրապէս 282ին վրայ աւելի կամ նուազ կարեւոր գործողութիւններ կատարած ենք:

Գործողութեամբ բժշկեալք .....	235
Առանց գործողութեան բժշկեալք .....	191
Գործողութեամբ բարւոքեալք .....	34
Առանց գործողութեան բարւոքեալք .....	91
Գործողութեամբ ոչ բժշկեալք .....	6
Արձակեալք .....	112
Առանց գործողութեան մեռեալք .....	24
Գործողութեան ենթարկմամբ մեռեալք .....	7
Գումար	700

Երեք հիւանդի վրայ յաջորդաբար իրարմէ տարրեր գործողութիւններ ըրած ըլլալով, կատարուած գործողութեանց իրական թիւը կը հասնի 285ի:

Այս ցուցակէն դիւրին է եզրակացնել թէ մահերու ընդհանուր թիւը շուրջ 4,43 առ 10 է, իսկ գործողութեան ենթարկմամբ մեռածներու մահուան թիւն է 1 առ 10, կարճ խօսքով 700 հիւանդներէ 31ը միայն մեռած են:

Փափաքելի էր որ կանանց բաժնին մէջ եւս դատ սենեակ մը ունենայինք հոգեւարք կիներու յատկացեալ, ինչպէս որ ունինք արանց կողմը: Մեր բոլոր հիւանդները, ինչ կրօնքի ալ պատկանին, իրենց կղերին այցելութիւնը կ'ընդունին երբ հոգեվար վիճակի մէջ գտնուին:

Նախապէս ըսինք թէ այս տարի 285 գործողութիւններ կատարած ենք, արդ՝ ասոնց մէկ քանին վրայ կ'արժէ որ քիչ մը տեղեկութիւն տանք:

1. 30 տարեկան հիւանդ մը որու ձախ աչքի վերին կողմը բոլորովին անհետացած էր խոյլային հին կեղաւորութեան (ulcération) մը հետեւանօք ինքնակազմութեան (autoplastie) ենթարկուելով՝ բուժուեցաւ: Գեղազիտական յաջողութիւնը կատարեալ եղաւ:

2. Հատում (ablation) մը կատարեցինք տղու մը ձախ ականջամուտքին մէջ գտնուած կանգնական այտոյցի (tumeur érectile) մը վրայ որ վարժապետի մը զարկած ապտակին հետեւանօք գոյացած է եղեր՝ ինչպէս ըսին: Ախտակրկնում չպատահեցաւ:

3. Երկու քիթ դարմանեցինք սահումի (glissement) եղանակաւ: Այս գործողութիւններէն մին կատարուեցաւ Բանկայթիցի խոհարար կնոջ մը վրայ, որու մասին օրաթերթերը այնքան խօսեցան այն ատեն: Բայց որովհետեւ քիթին միջնացանկը բնաւ գոյութիւն չունէր, թեթեւ խորութիւնով մը յաջողեցանք բուժում ձեռք բերել:

4. Իննամեայ տղու մը վրայ, որու ձախ այտը ու շրթունքներուն մէկ մասը եղծուած էին քաղցկեղէ, վիզէն մասեր առնելով կրցանք գոցել մի եւ նոյն կողման կզակային մասերը ու դարբեցնել լորձնային շարունակական հոտումը: Սոյն տղուն զազրելի դէմքը կերպարանափոխուելով՝ նշանաւոր կանոնաւորութիւն մը ստացաւ:

5. Երկու գերածումն նշկաց. — Խլում՝ Մէղօնէօլի գործիքով: Թերեւս այս պարագային մէջ կարելի ըլլայ կալվանօ-գօթէր գործածել, բայց մենք չփորձեցինք այս կերպը մեր հիւանդաց վրայ:

6. Շնչափողատութիւն (trachéotomie) մը՝ խոչափողի այտուցի մը համար:

7. Հատում՝ ենթախոչաքերանային (sous-glottique) մեղմ այտուցի մը՝ կալվանօ-գօթէրի միջոցաւ, բարեկամիս Տօք. Տատուրի գործակցութեամբ:

8. Ութնամեայ անձի մը վրայ հատում՝ ծոծրակի ճարպուռի մը՝ որն որ երկու քիթօ կը կռէր:

9. Երկու հատում կատարեցինք ստինքի՝ պարպելով մի եւ նոյն ատեն անութն ալ: Այս օրինակ պարագաներու մէջ ընդհանրապէս մկանունքը մինչեւ ոսկոր կը հանենք՝ ախտին վերստին կրկնումին դէմ լաւ ե'ւս մաքառելու համար:

10. Պոտի ցաւ (Mal de Pott), — Այս պարագային կը փորձենք նաև Գալօի (Calot) եղանակը, այս կերպը տղու մը վրայ փորձելով՝ որն որ հազիւ կրնար քալել եւ որուն կուզը տարուան մը կար, կատարելապէս յաջող արդիւնք ձեռք բերինք:

11. Թարախուտ ջրգողութիւն թոքամզնի (pleurésie purulante). — Հիւանդը գործողութեան ենթարկելով, կողահատութիւն կատարեցինք: Այս տեսակ հիւանդներու վրայ միշտ մէկ կամ երկու կողերու հանումը ի գործ կը դնենք:

12. Երեսնամեայ կնոջ մը մակորովայնական մորթային մասին

մէջ՝ ջրապայարային փուշտի մը հանդիպեցանք որուն հատումը կատարեցինք բարեկամիս Տօքթ. Նազարեան պէյլի հետ: Գործողութենէն առաջ՝ սոյն այտուցին ակտանուերը նշանակուեցաւ միայն այն ատեն երբ Բրափայլի գրեխով ծակում (ponction) կատարեցինք փորին վրայ:

13. Ախտածէտ տղու մը վրայ ճահճախտային ծագում ունեցող ահագին փայծաղի մը հատում փորձեցինք, բայց դժբաղդարար արդիւնքն աննպաստ ելաւ: Անշուշտ սոյն գործողութիւնը ատեն անգամ մահացու չէ, մանաւանդ ճահճախտի մէջ, սակայն ներկայ պարազային մէջ choc opératoire մը տեղի ունեցաւ: Ուրիշ առթիւ դարձեալ փայծաղի գերածման մը մասին խօսած եմ, ուր վիրահատական յաջողութիւնը կատարեալ եղած է:

14. Երկու երիկամային տեղափոխութիւն բուժուած են երկկամակարումի (néphropexie) միջոցաւ: Այս երկու կիներէն մահաւանդ միոյն վրայ վիրահատական յաջողութիւնը և ակտուար երեւոյթներու անհետացումը ա՛յնքան շուտ տեղի ունեցաւ որ կիներ 20 օր վերջ մեկնեցաւ Հիւանդանոցէս: Երիկամին հատումը փութացնելու համար, Բրօֆէսէօր Կիւյօնի խորհուրդին համաձայն, վերջին կողը՝ կապերէն միոյն մէջ կ'առնեմ:

15. Լուսնոտի մը վրայ՝ որու փորը դանակի մը հարուածէն լայն բացուածք մը ունեցած էր և աղիքները դուրս թափած էին՝ որովայնահատում ի գործ դրինք, հանդերձ աղեճարպային հատուումով: Հիւանդը բուժուեցաւ: սակայն վիրահատութիւնը պատճառ եղաւ հիւանդին լուսնոտութենէ յաճախակի բռնուելուն:

16. Ցայլական աղեթափութեան ենթակայ եղող 58 անձի գործողութիւն ըրած ենք որոնցմէ միայն երկու քը խեղդող տեսակէն էին: Այս երկուքէն մին միայն աղէկցաւ, իսկ միւսը՝ որուն աղեաց գոսացաւութիւնը պէտք է նկատի առնել՝ մեռաւ: Ինչպէս 58 թուանշանէն կ'երեւի, աղեթափութեան գործողութիւնը մեր ամենէն յաճախ կատարած գործողութիւնն է:

Հազիւ հազ տեսանելի ու մերթ մինչեւ բարձքերուն միջին մասն իջնող աղեթափութիւնքն իսկ գործողութեամբ բուժուած են: Աղեթափութեան պարկին մէջ դիտած ենք մերթ աղիք, մերթ մակաթաղանթ, երբեմն կուրաղին և երբեմն ալ յաւելաղին՝ առանձին: Քանի մը կրամէն մինչեւ 500 կրամ կըող մակաթաղանթի և երկու անգամ ալ յաւելաղիի հատում կատարած ենք:

Երկու անգամ ալ աղեթափութեան հետ միասին փամփշտաթափութեան (hernie de la vessie) հանդիպեցանք: Այս պարազային փամփուշտին ներկայութիւնը խիստ հազուադէպ ըլլալուն՝ մահաւորաբար կը յիշատակեմ զայդ, վասն զի չսպասուած մէկ վայրկենէն՝ երբ վիրահատին կտրոյցին հանդիպի՝ անոր վիրաւորուելը անխուսափելի կ'ըլլայ: Դժբաղդարար այս դէպքը պատահեցաւ մեզ անգամ մը. անմիջապէս հիւանդին միզանցքէն ներս միզահան (sonde) մտցնելով՝ դիտեցինք որ անիկա ցայլական մասէն դուրս կ'ելնէր. ուստի անմիջապէս փամփուշտը կարեցինք ու ջանացինք շուտով արմատական դարմանը աւարտել: Այս հազուադէպ պատահարը նշանակելու անոր համար կը շահագրգռուիմ՝ որովհետեւ հիւանդը կատարելապէս բուժուելով 20 օրէն մեկնեցաւ Հիւանդանոցէս:

17. Աղեաց և որովայնային շճաթաղանթի ուռուածութեան (Éntéro-péritonite tuberculeuse) ենթակայ եղող 4 տղոց վրայ որովայնահատութիւն ի գործ դրինք: Չորսն ալ աղէկցած մեկնեցան:

18. Կրկնուած յաւելաղետապի (appendicite à répétition) դէպքի մը՝ գործողութիւն կատարելով՝ բուժում ձեռք բերուեցաւ: Միայն թէ յաւելաղիին անջատումը խիստ դժուար տեղի ունեցաւ՝ կցումներուն (adhérences) պատճառաւ:

19. Ուղեղային պալարի մը հետեւանքով դանկահատում (trépanation) ի գործ դրինք Ֆարապէօֆի գործիքին միջոցաւ, բայց հիւանդը ուղեղային տենդէ բռնուելով՝ մեռաւ:

20. Հինգ հիւանդներ՝ որոնք տեւատեսութենէ (hémorrhoidé) առաջ եկած այտուց և արեւահոսութիւն ունէին, Բաքլէնի Չերմատաղով (thermocautère de Paquelin) դարմանեցինք, ուրիշ լաւ արդիւնքներ ստացանք՝ առանց վերջէն անձկութիւն (rétrécissement) տեղի ունենալու:

21. Ինը հատ յղի կիներ ունեցանք որոնց 5ին ծննդարերութիւնը բնական եղաւ, 3ը մեկնեցան ու վերջինը հինգերորդ ամսուն մէջ վիժում մը ունեցաւ placenta previaի հետեւանօք:

22. 34 կիներ արգանդային քերումի (curettage) ենթարկուեցան՝ տեւական արիւնահոսական արգանդատապի և երկու անգամ ալ վիժման հետեւանօք, և առանց վտանգի առողջացան: Այրող լուծոյթներէն՝ ամենէն աւելի մանիչի երփնաջուրին (tein-

ture d'iode) նախապատուութիւն կուտանք, զոր Պրօնի (Brauu) գրեխին միջոցաւ արդանդային խորչին մէջ կը ներմուծենք:

23. Կնոջ մը վրայ, որ արգանդի արիւնհոսական նեարդուռ (Fibrome de l'utérus hémorrhagique) ունէր, կատարեցինք որովայնային մասնական արգանդահատում՝ որոյ կոթունն որովայնի շճաթաղանթէն դուրս թողուեցաւ (avec pédicule extrapéritonial) հիւանդը բուժուեցաւ. կոթունն դարմանեցինք թանէնի և իօսոֆօրմի (tanin et iodoforme) խառնուրդով: Նմանօրինակ պարագաներու մէջ երբեմն ձուարաններն ալ կը հանենք եւ երբեմն՝ տեղերնին կը թողունք:

24. Երկու անգամ արգանդի անկման (prolapsus utérin) առթիւ՝ փորձեցինք որովայնի հաստատումը: Բոլորչի կապերու կարճումը ի կիր առնուած չէ մեր կողմէ: Իսկ արգանդափողային կծկումը միայն անգամ մը փորձեցինք առանց որ եւ է յաջողութեան: Անձնական փորձառութեանս վրայ յենելով՝ առ այժմ չեմ կրնար ըսել թէ արգանդակարումը (hystéropexie) կրնայ անտարակոյս ու միշտ վիժումի պատճառ ըլլալ: Այս երկու կիներէն մին, յիրաւի, ունեցաւ վիժում մը աւելի վերջէն, բայց ասիկա չի կըրնար վերագրուիլ գործողութեան, վասն զի սոյն կինը դադիական ախտ ունէր ու մեր միջամտութենէն առաջ՝ նոյն իսկ երկու անգամ՝ վիժում ունեցած էր արդէն: Այս գործողութեան համար արգանդէն անցնող երեք կար բաւական են:

25. Կին մը որ մի և նոյն ատեն արգանդափողի ու սրբանի կրկին պատառուածքներու երթակայ էր, գործողութեան ենթարկուելով՝ բոլորովին աղէկցաւ: Արգանդափողը էմմէթի (Emmet) եղանակաւ դարմանուեցաւ, մինչդեռ միւսը Լ. Թէթի (L. Tait) կերպով: Ինձ համար այս երկու եղանակները լաւագոյն են:

26 Կնոջ մը վրայ՝ որու ձախ ձուարանը վատասերած էր եւ աւելի կամ նուազ սաստիկ ցաւեր կը պատճառէր՝ որովայնահատում կատարուեցաւ՝ հանելու համար նոյն գործարանը: Բուժումը կատարեալ եղաւ: Ուրիշ կին մ'ալ նոյնպէս ձուարանահատման (ovariotomie) ենթարկեցինք որ 15 լիտր հեղուկ պարունակող փուշտ(kyste) մ'ունէր: Սոյն փուշտը իր անհամեմատ մեծութեանը համար պահած ենք:

27. Երկու որձատութիւն կատարեցինք, մին ձախ կողման ուսական ամորձատապ ունեցող մարդու մը, միւսն ալ ամորձիքին

վրայ մուռ ունեցող հիւանդի մը: Արիւնհոսութիւն՝ բնա՛ւ:

28. Հիւանդ մը որուն մէկ ամորձիքը վիրատրուած ու դուրս թափած էր, բուժուեցաւ՝ նախ ամորձիքը կտրելով ու յետոյ զայն իր տեղը գետեղելով:

19. Հատ մ'ալ ուռական փամփշտատապ (cystite tuberculeuse) ունեցանք որուն փամփուշտը բացուելով քերում կատարուեցաւ, այլ հակառակ վէրքին գոցուելուն՝ հիւանդը մեռաւ, ախտին ծաւալման հետեւանօք:

30. Բարթոլինեան գեղձի բորբոքման (Bartholinite) ենթակայ երկու կիներ բուժուած են, քլորօֆօրմի սակ փուշտերուն՝ հանուելէն յետոյ՝ որոնց մին թարախտած էր: Այս առթիւ պէտք է միշտ խնայել արգանդափողային հուզաթաղանթն:

31. Փամփշտային միզային քարեր ունեցող 2 հիւանդ ունեցանք, մէկուն վրայ միջնայքի հատում (taille périnéale) ի գործ դրինք, իսկ միւսին՝ ենթատրոպայնային հատում (taille hypogastrique): Այս վերջին պարագային՝ Կիւյօն-Բէրիէի (Cuyon-Perier) խժափողը գործածեցինք. բայց վստահարար՝ ապագային պիտի փորձեմ նաև փամփուշտի կարումը, որ աւելի արագ բուժում մը յառաջ պիտի բերէ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅՈՒՑԱԿ ՀԻՒԱՆԴԱՅ ԵԼԵԻՄՏԻՑ

1900 Յուն. 1ի պատրաստ. հիւանդք 64	Բժշկեալք	426
1900 Յուն. 1է մինչև 1901 Յուն.	Բարուքեալք	125
1 ընդունուած հիւանդներ 698	Արձակեալք	418
	Գումար	762
1901 Յունուար 1ին պատրաստք 62	Մեռեալք	31
	700	700

Ահա ամբողջ ըսելիքս ներկայ տարւոյս համար: Կը յուսամ աւելի կատարեալ տեղեկագիր մը պատրաստել գալ տարի որ իմ ծառայութեանս 7րդ տարին պիտի ըլլայ:

Պարտք կը համարիմ ներկայս կնքելու իմ ջերմ շնորհակալիքս յայտնել Ձեզ Պատուարժան Հոգարարձութեանդ բոլոր այն զոհողութեանց համար՝ զորս բարութիւնն ունեցաք ընելու բարելաւելու իմ բաժինն, եւ մեծարոյ օժանդակ բժշկաց Հիւանդանոցիս Տեարց Տօքթ. Բարադամեան, Գաղաղեան եւ Իրլիքճեան ու Ա. դեղագործին Ֆէրհատեան էֆէնտիի՝ որք այնչափ ազնուութեամբ գործողութեանցս պահուն ինձ հետ կ'ախտակցին:

Վիրաբոյժապէս Ազգ. Հիւանդանոցի  
ՏՕՒԹ. ԶՍԲԳԱՐԵԱՆ

28 Ապրիլ 1901

**Ք . Յ Ի Մ Ա Ր Ա Ն Ա Ց**

**Մ Ի Ա Մ Ե Ա Յ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

1900 Յունուար 1-ին մինչև 1901 Յունուար 1

Տեղ Ասենապես եւ Տեարք Խորհրդակալի

Պատուարժան Հոգաբարձութեան

Եւսի-Գուլիի Ազգային Հաստատութեան

Պատիւ ունիմ ներկայիս հետ Ձեզ յղել Յիմարանոցի արանց եւ կանանց բաժիններու 1900 տարւոյ ելեւմուտքն պատկերող ցուցակներն: Այս ցուցակաց թուանշաններէն դիւրին պիտի ըլլայ Ձեզ տեսնել թէ՛ երկու սեռէ հիւանդաց թիւն յարաճուն վիճակ մ'ունի, հակառակ երկու բաժիններէն միանգամայն տեղի ունեցած շատ մը ելքերուն (մեկնումներուն):

Անցեալ տարուրէն մնացած հիւանդներէն բժշկեալներուն համեմատութիւնն է արանց համար 0/0 9,37, իսկ կանանց 0/0 13,6: Նորեկ արանց 0/0 30,48ը բժշկեալ են, իսկ կանանց 0/0 35,10ը:

Յիմարանոցի երկու բաժիններու մահականութիւնն 0/0 8,5 ի սովորական միջինէն փոքր աւելի եղած է: Ի նկատի առնելով մեր խնամոց յանձնեալ անձանց կազմն՝ այս միջինն շատ աւելի նուազ պարտէր ըլլալ, եթէ մեր երկու բաժիններու առողջապահական պայմաններն լաւագոյն ըլլային: Արդարեւ մահացելոց աւագ մեծամասնութիւնը ուսականութեան զոհ կ'երթայ, հիւանդութիւն՝ զոր ընդհանրապէս մեր յարկերուն մէջ կ'ընդունին, զի այս պիտան որջ դրած է Յիմարանոցի երկու բաժիններու մէջ միանգամայն:

Առ այս բազմիցս գրեցի Պատկառելի Խորհրդոյդ, նոյն իսկ անցեալ տարւոյ Տեղեկագրոյս մէջ, մասնաւորապէս շեշտելով առաջարկեցի տարին զոնէ քանի մը անգամներ կրով բուել Յիմարանոցի երկու բաժիններու պատերն եւ զգացուցի հականեխական ջեռոցի (étuve) մը անհրաժեշտ պէտքը: Դժբաղդարար առաջարկու-

թիւններս անխելի մնացին եւ այսօր արտուր հետեւութեանց հանդիսատես կ'ըլլանք:

Յիմարանոցի բնակչութեան օր քան զօր աճումն մեր յարկերը ուսականութեան վարակիան նպաստաւոր միջավայրի մը կը վերածեն: Արդարեւ ոչ միայն հիւանդաց խանութ կայ՝ այլ նոյն իսկ կատարեալ խնոզում:

Թոյլ տուք ինձ անգամ մ'եւս խնդրել Պատկառելի Խորհուրդէդ՝ մօտէն զբաղել Յիմարանոցի բաժիններով, զի ներկայ վիճակաւ հնար չ'է շարունակել. կամ վերջ տալու է նոր յիմարաց ընդունելութեան եւ կամ 500 անձեր պատասպարելու կարող Յիմարանոցի յատուկ շէնք մը կառուցանելու է:

Վերջերս Եւրոպիոյ նմանօրինակ հաստատութեանց ըրած այցելութեանցս շնորհիւ տեսնուած փորձերուն վրայ յենելով՝ այս տարի աւելի կարեւորութիւն տուի յիմարաց երկրագործական աշխատութեանց, որք լաւ արդիւնք կուտան: Այս մասին կը խնդրեմ Պատուարժան Հոգաբարձութեանէն ինձ յանձնել աշխատանոցի վերածելի յարկեր՝ ուր յիմարները կրնան աշխատիլ անձրեւոտ օրերն: Այս աշխատութիւնք նոյն իսկ Հաստատութեանս համար շահարկեր կրնան ըլլալ:

Տարւոյս ընթացից մէջ ըստ սովորութեան գիտական աշխատութիւններ ալ ունեցայ, ու բազմաթիւ գործեր հրատարակեցի, որոնց շնորհիւ արժանացայ անուանուիլ Իսկական Անդամ « Societa Trenatria Italiana » ի, Թիւրակից Անդամ « La Société de Névrologie et de psychiatrie de Vienne » ի եւ Օսար Անդամ « La Société Médico-Psychologique de Paris » ի:

Այս պատիւներն գլխաւորապէս Ձեզ կը վերաբերի, Ձեզ Տեարք, որ շարունակեցիք ինձ հանդէպ ունեցած Ձեր մեծ վրաստահութիւնն եւ զիս պահեցիք միշտ ի գլուխ Ձեր խնամոց յանձնուած Հաստատութեան այն կարեւոր բաժնոյն՝ որոյ զեկն ունիմ ի ձեռին, եւ որ ինձ մատակարարեց այդ աշխատութիւնները արտադրելու կարեւոր նիւթերը:

Ներկայս կնքելէ առաջ թոյլ տուք ինձ, Տեարք, յիշատակել Ձեզ իմ օգնականս եւ յիմարապահներս՝ որք մեծապէս օժանդակեցին ինձ իմ գործիս մէջ եւ մերթ հիանալի եռանդով մը կատարեցին իրենց բազմազան պարտականութիւններն:

Հաճեցէք բնդունիլ, Տէր Ատենապետ եւ Տեարք Անդամք Խորհրդականք, իմ եւ իմ ստորակարգելոցս շնորհաւորութիւններն նոր սկսող տարւոյն համար եւ հաճեցէք զիս համարիլ միշտ

Կ. Պոլիս, 6/20 Յունուար 1901

Ձերդ անձնուէր

**ՏՕՒԹ. Լ. ՄՕՆՃԷՐԻ**

Յիմարանոցի Եւսի-Գուլիի Հայկական Հաստատութեան

ԱՌՏԱԲԱՆԱԿԱՆ ՅՈՒՅԱԿ ԱՐԱՆՅ ՅԻՄԱՐԱՆՈՅԻ

ԱՌՏԱՆՈՒՆՔ	ԱՌՏԱՆՈՒՆՔ 1900 Յունուար 1						ԱՌՏԱՆՈՒՆՔ 1900 Գեղեճուհի 31					
	Պարսկերեն	Հուանդանգերեն	Հիւանդանոց	Բժշկական	Բարոսնական	Արձակատան	Մեծաբայ	Պարսկերեն	Հիւանդանոց	Բժշկական	Բարոսնական	Արձակատան
Բորբորեալ մոլեգնութիւն (Exalt. maniaque)	1	3	0	0	2	1	0	0	0	0	0	1
Մոլեգնութիւն (Manie)	14	0	0	0	1	0	0	0	0	0	0	13
Սուր (Aiguë)	0	2	0	0	1	0	0	0	0	0	0	1
Մեղմուտի (Chronique)	0	0	0	0	1	0	0	0	0	0	0	0
Մեղմուտի (Transitoire)	3	2	0	0	3	0	0	0	0	0	0	2
Շրջուն յիմարութիւն (Folie circulaire)	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	1
Չգայարանական յիմարութիւն (Folie sensor.)	1	1	0	0	0	0	0	0	0	1	0	1
Սուր գառանջանք (Délire aiguë)	1	1	0	0	0	0	0	0	2	0	0	0
Անմտապանծ դասաւորեալ գնորք (Délire systématisé expansif)	14	0	0	0	0	0	1	1	1	1	1	12
Պարզ սեւամտեղծութիւն (Mélancolie simple)	29	11	0	0	6	2	1	2	2	2	2	29
Տիրամտութիւն (Lypémanie)	8	5	0	0	2	1	0	2	8	8	8	8
Ապուշ սեւամտեղծ. (Mélanc. avec stupeur)	2	1	0	0	0	1	0	1	1	1	1	1
Անմտապանծ սեւամտեղծ. (Mélanc. anxieuse)	1	0	0	0	0	0	0	0	1	1	1	1
Անմտապանծ դասաւորեալ գնորք (Délire systématisé dépressif)	5	1	0	0	0	0	0	0	0	0	0	6
Չուգախելութիւն (Folie à deux)	1	0	0	0	0	0	0	1	0	0	0	0
Բրայտական յիմարութիւն (Folie Brightique)	1	1	0	0	1	1	0	0	0	0	0	0
Խօյութիւն (Démance)	12	9	0	0	0	2	4	2	13	13	13	13
Կանխահաս (Précoce)	27	1	0	0	0	1	0	1	0	1	0	26
Ծերութեան (Sénile)	1	1	0	0	0	0	0	2	0	2	0	0
Յառաջխաղաց ընդհանուր անդամալուծութիւն (Paralysie générale progressive)	4	11	0	0	0	0	4	3	8	8	8	8
Տկարամտութիւն (Imbécillité)	27	12	0	0	0	6	3	0	26	26	26	26
Ապշուութիւն (Idiotie)	6	1	0	0	0	1	0	4	6	6	6	6
Գոհողականութիւն (Alcoolisme)	7	6	0	0	1	4	0	1	7	7	7	7
Լուսնոտութիւն (Epilepsie)	23	4	0	0	0	2	0	1	24	24	24	24
Հիստերի (Hystérie)	0	1	0	0	1	0	0	0	0	0	0	0
Ուղեղային արիւնակուտում (Congest. céréb.)	1	0	0	0	0	0	0	0	1	1	1	1
Յիմարութիւն չհաստատուած (Reconnus non aliénés)	0	7	0	0	1	0	0	0	7	7	7	7
Ի ընկնող (En observation)	2	1	0	0	3	0	0	0	0	0	0	0
	192	82	0	0	21	22	13	24	194	194	194	194
	274				80							194

Ելք. — Արանց բաժնէն մեկնող 80 անձանց 37ը Յունուար 1ի 192 պատրաստութեան են, իսկ 43ը սարույն շրջանին մէջ եկած 82 յիմարութեան են, որով անցեալ տարւոյն մնացածներէն  $\frac{37 \times 100}{192} = 19,27$  մեկնած են, իսկ նորերէն  $\frac{43 \times 100}{82} = 52,43$  :

Բժշկեալք էլ բարոսնական. — Բժշկեալ էլ բարոսնական 43 անձանց 18ը անցեալ տարւոյն մնացածներէն են, իսկ 25ը այս տարւոյն մեկնողներէն, որով առաջիններուն համեմատութիւնն է  $\frac{18 \times 100}{192} = 9,37$  իսկ վերջիններունն  $\frac{25 \times 100}{82} = 30,48$  :

Մեռեալք. — Դարձանեալ 274 յիմարաց 24ը մեռեալ են որով կ'ունենամք  $\frac{24 \times 100}{274} = 8,75$  ր մահականութիւն մը :

ԱՌՏԱԲԱՆԱԿԱՆ ՅՈՒՅԱԿ ԿԱՆԱՆՅ ՅԻՄԱՐԱՆՈՅԻ

ԱՌՏԱՆՈՒՆՔ	ԱՌՏԱՆՈՒՆՔ 1900 Յունուար 1						ԱՌՏԱՆՈՒՆՔ 1900 Գեղեճուհի 31					
	Պարսկերեն	Հիւանդանոց	Բժշկական	Բարոսնական	Արձակատան	Մեծաբայ	Պարսկերեն	Հիւանդանոց	Բժշկական	Բարոսնական	Արձակատան	Մեծաբայ
Բորբորեալ մոլեգնութիւն (Exalt. maniaque)	2	1	0	0	0	0	0	0	0	0	0	3
Մոլեգնութիւն (Manie)	7	1	0	0	0	0	0	0	0	0	0	8
Սուր (Aiguë)	7	1	0	0	0	0	0	0	0	0	0	0
Մեղմուտի (Chronique)	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	6
Մեղմուտի (Transitoire)	3	1	0	0	0	2	1	0	0	0	0	1
Շրջուն յիմարութիւն (Folie puerpérale)	1	1	0	0	0	0	0	0	0	0	0	0
Հիստերական յիմարութիւն (Folie hystérique)	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	1
Լուսնոտական յիմարութիւն (Folie épilept.)	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	1
Չգայարանական յիմարութիւն (Folie senile)	3	2	0	0	0	0	0	0	0	0	0	5
Բարոսնական յիմարութիւն (Folie morale)	2	1	0	0	0	0	2	1	0	0	0	0
Անմտապանծ դասաւորեալ գնորք (Délire systématisé expansif)	3	2	0	0	0	1	0	0	0	0	0	4
Պարզ սեւամտեղծութիւն (Mélancolie simple)	8	9	0	0	2	2	1	3	9	9	9	9
Տիրամտութիւն (Lypémanie)	4	5	0	0	2	1	0	0	6	6	6	6
Ապուշ սեւամտեղծ. (Mélanc. avec stup.)	2	0	0	0	0	1	0	0	1	1	0	1
Անմտապանծ սեւամտեղծ. (Mélanc. anxieuse)	1	1	0	0	0	1	0	0	1	1	0	1
Անմտապանծ դասաւորեալ գնորք (Délire systématisé dépressif)	1	1	0	0	0	1	0	0	1	1	0	1
Չուգախելութիւն (Folie à deux)	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	1
Բրայտական յիմարութիւն (Folie Brightique)	1	1	0	0	0	0	0	0	0	0	0	1
Խօյութիւն (Démance)	1	1	0	0	0	0	0	0	1	1	1	1
Կանխահաս (Précoce)	1	1	0	0	0	0	0	0	0	0	0	2
Բորբորեալ (Agitée)	1	0	1	0	0	0	0	0	0	0	0	2
Խօյութիւն (Primitif)	10	0	0	0	0	0	0	1	9	9	9	9
Խօյութիւն (Consécutif)	2	4	0	0	0	0	3	1	2	2	1	2
Ծերութեան (Sénile)	0	2	0	0	0	0	1	0	1	1	0	1
Կամուսապիւն (Apoplétique)	0	2	0	0	0	0	0	0	0	0	0	2
Յառաջխաղաց ընդհանուր անդամալուծութիւն (Paralysie générale progressive)	10	5	0	0	0	2	0	3	15	15	15	15
Տկարամտութիւն (Imbécillité)	2	1	0	0	0	0	0	0	9	9	9	9
Ապշուութիւն (Idiotie)	9	2	0	0	0	2	0	2	7	7	7	7
Լուսնոտութիւն (Epilepsie)	2	3	0	1	2	0	1	0	1	1	0	1
Հիստերի (Hystérie)	0	4	0	1	3	0	0	0	0	0	0	0
Յիմարութիւն չհաստատուած (Reconnus non aliénés)	0	4	0	1	3	0	0	0	0	0	0	0
	95	54	1	2	16	14	6	13	99	99	99	99
	150				51							99

Ելք. — Կանանց բաժնէն մեկնող 51 անձանց 23ն Յունուար 1ի 95 պատրաստութեան են, իսկ 28ը սարույն շրջանին մէջ եկած 55 յիմարութեան են, որով անցեալ տարւոյն մնացածներէն  $\frac{23 \times 100}{95} = 24,2$  մեկնած են, իսկ նորերէն  $\frac{28 \times 100}{55} = 50,9$  :

Բժշկեալք էլ բարոսնական. — Բժշկեալ էլ բարոսնական 32 անձանց 13ն անցեալ տարւոյն մնացածներէն են, իսկ 19ը այս տարւոյն մեկնողներէն, որով առաջիններուն համեմատութիւնն է  $\frac{13 \times 100}{95} = 13,6$  իսկ վերջիններունն  $\frac{19 \times 100}{55} = 35,4$  :

Մեռեալք. — Դարձանեալ 150 յիմարաց 13ն մեռեալ են, որով կ'ունենամք  $\frac{13 \times 100}{150} = 8,7$  ր մահականութիւն մը :

Գ. Ո Ր Ք Ա Ն Ո Յ

Մ Ի Ա Մ Ե Ա Յ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ի

1899 Սեպտեմբերին մինչև 1900 Օգոստոս

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՈՑ

Մասնացեալ առ Պատուարժան Կրթ. Խնամակալութիւն

1898-1899 դպրոցական տարւոյ տարեկան արձակուրդէն անմիջապէս յետոյ, 1899 Սեպտ. 1/13ին Որբանոցիս նոր տարեշրջանի (1899-1900) դասախօսութիւնները վերատին սկսան: Նախորդ տարւոյ մէջ ունէինք միայն Տարրական և Միջին դասընթացքներ ու Մտփոց մը: Այս տարի կազմուեցաւ նաև Բարձրագոյն դասընթացքը:

Նոր կարգերու կազմութեան առթիւ, մէկ կողմէ անցեալ տարւոյ մէջ իւրաքանչիւր ամիս աշակերտաց ստացած վարուց և բւամանց միջին թուոց և տարեկան քննութեանց միջին թուոց արդիւնքը հիմբունուեցաւ, և միւս կողմէ ուշադրութեան առնուեցաւ մասնաւորապէս աշակերտաց տարիքը:

Շատ մը չափահաս տղայք, թէպէտ և երկու տարիէ ի վեր Որբանոցս ընդունուած, բայց անկէ առաջ բնաւ դպրոց դացած և նախնական ուսում առած չ'ըլլալով՝ ստորին դասարաններու մէջ կը գտնուէին՝ փոքրահասակ տղայոց հետ:

Յայտնի է թէ միեւնոյն դասարանի աշակերտաց տարիքի անհամեմատութիւնը, զանազան անպատեհութիւններէ զատ, իմացական տեսակէտով թէ՛ փոքրերուն և թէ՛ մեծերուն հաւասարապէս վնասակար հետեանքներ ունի, վասն զի՝ փոքրերը կը ստիպուին իրենցմէ տարիքով մեծ ընկերներու հետ աշխատիլ և իրենց կարողութենէն աւելի, մեծերուն հաւասար աստիճանաւ՝ ուսում առ-

նելու անընտան հիգեր ընել. մեծերն ալ միւս կողմէ ստիպուած կ'ըլլան զոհողութիւններ կրել, աշխատելով իրենցմէ տարիքով փոքր դասընկերներու հետ, որոնց ըմբռնելու կարողութիւնն 'ի՛նչ ալ ըլլայ դասին նիւթը՝ չկրնար հաւասարիլ. իրենց մեծերուն, ունեցած մտային կարողութեան:

Ուստի ստորին դասարաններու չափահաս աշակերտները բաժնեցինք փոքրերէն, և այս կերպով իւրաքանչիւր դասարանի աշակերտաց մէջ ըստ կարի կրցանք պահել տարիքի հաւասարութիւնն, որ ամէն մէկ դասարանի աշակերտաց միօրինակ զարգացումը ապահովելով՝ կ'ապահովէ նաև դպրոցին ընդհանուր յառաջդիմութիւնը: Ա. դասարանի մէջ գտնուող չափահաս աշակերտ մը, փոխանակ Բ<sup>Թ</sup> ը դնելու՝ բարձրացուցինք Գ<sup>Թ</sup> դասարանը, և Գ<sup>Թ</sup> էն Ե<sup>Թ</sup> դասարանը, այսինքն Տարրականէն Միջին, Միջինէն Բարձրագոյն դասընթացքը:

Այս միջոցն՝ որուն յաջողութիւնն արդէն աներկբայելի էր, կատարելապէս արդարացուց մեր ակնկալութիւնը և մեծապէս օգտակար եղաւ աշակերտաց:

Այս տարեշրջանիս մէջ ունեցանք 6 դասարան հետեւեալ կերպով.

Նախապատրաստական դասարան	23	աշակերտներով
Տարրական դասընթացքի Ա. տարին	29	»
»	»	»
»	»	»
Միջին	»	»
»	»	»
»	»	»
Բարձրագոյն	»	»

Իւրաքանչիւր դասարան՝ առանձին սենեակներու մէջ զետեղուած՝ ունեցաւ իր դաստիարակ-ուսուցիչը:

Վեց դաստիարակ-ուսուցիչներէն զատ՝ ունեցանք նաև 7<sup>Թ</sup> մը, շարաթական արձակուրդով բացակայ դաստիարակ-ուսուցիչն առկը բռնելու յատուկ պաշտօնով:

Պաշտօնավարեցին նաև 6 այցելու մասնագէտ ուսուցիչներ. Թուրքերէն լեզուի, Կրօնագիտութեան, Թուրք. լեզուի և Օսմ. պատմութեան (Թուրք ուսուցիչ մը՝ Հասարակաց Կրթ. Նախարարութեան կողմէ կարգեալ), Գեղագրութեան, Գծագրութեան և Եկեղեցական երգերու. ընդամենն՝ Տեսուչն ի միասին հաշուելով՝ 14 կրթական պաշտօնեայնէր:

Դասերու տեւողութիւնը մէկ ժամ է միայն. նախապատրաստական դասարանի աշակերտաց դասերն աւանդուեցան յատուկ ժամանակացոյցի մը համեմատ. դասախօսութիւններէն ոմանց 30, ոմանց 40 վայրկեան տրուեցան՝ ըստ կարեւորութեան նիւթին, աւելի ժամանակ յատկացուած ըլլալով փոքր տղայոց հանգըստի եւ զբօսանաց:

Աւանդուած դասերն են, Կրօնագիտութիւն եւ Բարոյախօսութիւն, Թուարանութիւն, Մայրենի լեզու, Իրագիտութիւն, Աշխարհագրութիւն, Պատմութիւն, Գրավարժութիւն, Գծագրութիւն, նաեւ երգ եւ մարմնամարզական վարժութիւններ առանց գործիքի եւ ձեռական աշխատութիւններ:

Տարր. Դասընթացքի իւրաքանչիւր տարիներու մէջ աւանդուեցան Կրօնագիտ. եւ Բարոյախօսութ. Մայրենի լեզու, Թուարանութ. Պատմ. Աշխարհագրութիւն, Իրագիտութիւն, Գրավարժութիւն, Գծագրութիւն, Դպրոցական եւ Եկեղեցական երգ, Մարմնամարզի վարժութիւններ առանց գործիքի:

Միջին Դասընթացքի մէջ աւանդուեցան Կրօնագ. եւ Բարոյախօսութ. Մայրենի լեզու՝ միայն աշխարհարար, Թուարանութ. եւ Երկրաչափութ. Պատմ. եւ Աշխարհագր., Թուրքերէն եւ Ֆրանս. Բնական Գիտութ. Գրավարժ. Հայ. Թուրք. եւ Ֆրանս. Գծագր. Դպրոցական երգ, Եկեղեցական երաժշտութիւն եւ մարմնամարզական վարժութիւններ:

Բարձր. Դասարանի աշակերտաց աւանդուեցան, Կրօնագիտ. եւ Եկեղեց. պատմ. Մայրենի լեզու, գրարար եւ աշխարհ. Բարոյախօսութ. Թուարանութ. Երկրաչափ. Տոմարակալ. Պատմ. եւ Աշխարհագր. բնական, քղքին. եւ ուսումն. հանդերձ տնտեսագ. առեւտր. ծանօթութեամբք: Թուրք. եւ Ֆրանս. Գեղագրութ. եւ Հայ. Ֆրանս. եւ Թուրք. Գծագրութ. Դպրոցական երգ եւ Մարմնամարզ:

Իւրաքանչիւր դաստիարակ-ուսուցիչ իր դասարանին ուսմանց գլխաւոր ճիւղերը աւանդելէ գատ, կ'այցելէ նաև ուրիշ դասարան մ'ուր կը դասախօսէ ուսմանց այն ճիւղը որ իր մասնագիտութիւնն է, այնպէս որ ամէն դասընթացքներու աշակերտք կարգաւ կը լսեն բոլոր դաստիարակներու դասախօսութիւնը՝ փոխանակ կապուած ըլլալու միայն մէկ դաստիարակ-ուսուցչի:

Սակայն մէն մի դաստիարակ-ուսուցիչ յատուկ պատասխա-

նատուութիւնն ունի կրթութեան, կարգապահութեան եւ դաստիարակութեան այն դասարանին աշակերտաց՝ որոց մասնաւոր դաստիարակ-ուսուցիչը կարգուած է:

Որբանոցիս մնայուն Ուսուցչաց խումբը դպրոցական տարւոյն սկիզբն իւր առաջին ժողովները կազմելով, խորհրդակցութեամբ կ'ընտրէ ուսանողաց դասագրքերը եւ կ'որոշէ դասերու բաժանումը եւ ժամանակացոյցը: Ուսուցչական ժողովը կը գումարուի ամէն 15 օրն անգամ մը, եւ կը խորհրդակցի դասուց աւանդման եղանակը որոշելու եւ իւրաքանչիւր դասընթացքի աշակերտներու աւանդուած ուսմանց միջեւ համերաշխութիւնը պահպանելու խնդրոց վրայ, ինչպէս նաև կը զբաղի ներքին բարեկարգութեան վերաբերեալ խնդիրներով:

Տարւոյս ընթացին մէջ տեղի ունեցան երկու անգամ եռամեայ բեանացի քննութիւններ, առաջինն Գեղտեմբերի, երկրորդը Մարտի սկիզբը՝ Տեսչութեանս եւ ուսուցչաց միջոցաւ. իսկ տարւոյս վերջը կատարուեցան գրաւոր եւ բերանացի քննութիւնները, որոնց ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ՝ Կրօնական Ժողովոյ Սրբազան Ատենապետը, Պատ. Հոգաբարձութեան եւ Խնամակալութեանդ Անդամք եւ ուսումնասէր ազգայիններ:

Քննութեանց աւթիւ քննիչք գոհութեամբ տեսան ուսանող որբերուն ուսումնական յառաջադէմ վիճակը եւ հաստատեցին Որբանոցիս ընդհանրապէս թէ՛ ուսումնական եւ թէ՛ կրթական բարեփոխեալ կացութիւնն՝ որ այս միամեայ շրջանիս մէջ ձեռք բերուած էր Պատուարժան Խնամակալութեանդ ջանիւք:

Արդարեւ այս բարեփոխումը սկսած է յօրէ անտի պաշտօնաւորութեան Պատուարժան Խնամակալութեանդ որ Որբանոցիս կըրթական վիճակը հետզհետէ աւելի բարեկարգելու եւ որբերու բարւոք նախակրթութիւնն ապահովելու փափաքն տածելով՝ ամեն ջանք ի գործ դրած եւ գոհողութիւններ իսկ յանձն առած է, յարատեւ եւ հիմնական բարեկարգութեամբ օժտելու այս Հաստատութիւնն իւր ամեն մասերուն մէջ, կրթական, ուսումնական եւ արհեստական:

Կրնանք յայտարարել թէ Որբանոցս ամենէն կանոնաւոր եւ բարեկարգ նախակրթարանի մը աստիճանաւ՝ լուրջ եւ իրենց վիճակին յարմարագոյն նախակրթութիւն մը կուտայ որբերուն:

Որբանոցս յառաջիկայ շրջանին կը պահէ ընծայել աղգին իւր

չըջանաւարտները: Բարձրագոյն Դասընթացքի Բ. տարւոյ շրջանն ալ ըստ օրինի բոլորելէ յետոյ:

Բացի կրօնական դասերէ Բարոյախօսութեան դասերով աշակերտաց բարեկրթութեան, կենցաղադիտական վարմանց, նկարագրի կազմութեան հոգ տարուած է, ի մտի ունենալով ներշնչել անոնց ոգի կարգապահութեան, աշխատասիրութեան, ընկերասիրութեան և կրթեալ կամօք բարւոյն նախանձախնդիր ընելու գանձնք:

Աշակերտաց դասերու մէջ յառաջդիմութեան մղում տարու նպատակաւ՝ ամէն ամիս վարուց եւ ուսմանց իւրաքանչիւր ճիւղի թիւերու միջիններն առնուելով, գոհացուցիչ թիւեր ստացող աշակերտաց ամօրեայ գոհունակութեան գրեր յանձնուեցան հրապարակային հանդէսիւ. յետամնաց և թոյլ աշակերտներուն ալ՝ ինչպէս նաև կարգապահութեան եւ բարեկրթութեան մէջ թերութիւններ ունեցողներուն յորդորներ տրուեցան իրենց յառաջադէմ և բարեկիրթ ընկերներուն՝ հետեւելու: Ամօրեայ հրապարակային այս դպրոցական հանդէսները ըստ սպասարութիւն թողուցին աշակերտաց վրայ, և գեղեցիկ արդիւնքներ յառաջ բերելու նպատակին:

\* \* \*

Աղջկանց Որբանոցի կազմակերպութիւնն ևս տեղի ունեցաւ ըստ կազմ: Կանոնագրի և ուսմունք աւանդուեցան ըստ Կրթ. Ծրբարգրի Ուսումնական Խորհրդոյ:

Աղջկանց Որբանոցն ունեցաւ

Նախապարաստ. դասարան մը	60	Երկսեռ աշակերտներով
Տարր. դասընթացքի Ա. տարին	27	»
Միջին » Ա. »	17	»
Բարձր. » Ա. »	17	աշակերտուհիներով

այսինքն Կանոնագրին տրամադրած բոլոր դասընթացքներն, որոնց իւրաքանչիւրը պիտի կրինէ յառաջիկայ տարի իւր ընթացքը, ուսմանց ընդլայնմամբ լրացնելու համար իւր օրինական երկամեայ շրջանը:

Նախապատրաստական դասարանը՝ երկու մաս բաժնուած ևս առանձին սենեակներու մէջ գետեղուած՝ յանձնուեցաւ պատասխանատու դաստիարակ-վարժուհւոյ և օգնական վարժուհւոյ մը

խնամոց: Միւս երեք դասարաններն ալ, առանձին սենեակներու մէջ գետեղուած, ունեցան իրենց պատասխանատու դաստիարակ-վարժուհիներն:

Բարձր. Դասընթացքին դաստիարակ-վարժուհին պաշտօն ունի նաև փոխանորդել Տեսչութիւնն եւ հսկել ընդհանուր բարեկարգութեան: Դաստիարակուհիներն ևս իրենց դասարանին գըլխաւոր դասերն աւանդելէ զատ՝ ստանձնեցին ուրիշ դասարանի մը ուսմանց մէկ երկու ճիւղերու աւանդումը:

Իւրաքանչիւր դասընթացքի դասախօսութեանց առարկաներն նոյնն եղան մանչերու Որբանոցի համապատասխան դասընթացքներուն ի բաց առեալ մանչերու եւ աղջկանց յատուկ առարկաները:

Բացի մնայուն դաստիարակ-վարժուհիներէն, ունեցանք նաև ձեռագործական աշխատութեանց մասնագէտ ուսուցչուհի մ'որ շարաթը երեք անգամ այցելելով կ'ուսուցանէ ստեղծագործութիւն եւ ձեռագիտութիւն:

Աղջկանց Որբանոցը կ'այցելեն նաև Ս. Յակոբայ Որբանոցի գեղադրութեան և գծագրութեան ուսուցիչներն, իւրաքանչիւրը շարաթը մէկ անգամ: Աղջկունք բացի ձեռագործական աշխատութիւններէ՝ կը զբաղին նաև իրենց հանդերձեղինաց կարի եւ կարկուտքի աշխատութիւններով:

Ուսուցչուհիք ամիսն անգամ մ'ի ժողով կը գումարուին Տեսչին հետ և կը խորհրդակցին ուսմանց ընթացքին եւ ներքին կարգադրութեանց վրայ:

Ամիսն անգամ մը աշակերտուհեաց ևս վարուց եւ ուսմանց միջին թիւերն հաշուելով հրապարակաւ կարդացուեցան և գոհունակութեան գրեր յանձնուեցան արժանաւորներուն:

Ամեն Կիրակի եւ Տօն օրեր՝ երկու Որբանոցներու աշակերտուհիք եւ աշակերտք ներկայ կը գտնուին եկեղեցական պաշտամանց եւ Ս. Պատարագի, նաև տարին երկու անգամ, Ս. Ծննդեան եւ Ս. Զատիկի տօներուն Ս. Հաղորդութիւն կը ճաշակեն:

Աշակերտք և աշակերտուհիք իրենց առաւօտեան եւ երեկոյեան ազօթքը կը մատուցանեն՝ դասարաններու մէջ, դաստիարակաց առաջնորդութեամբ. ճաշու ժամերուն սեղանատան մէջ կ'ազօթեն: Եկեղեցական ժամերգութեանց և Ս. Պատարագի ներկայ գտնուելու համար Ս. Յակոբայ որբերն ալ Հիւանդանոցի մատու-

ուր կ'երթան, Որբանոցիս մատրան մէջ ժամերգութիւն չկատարուելուն համար: Աշակերտներէն միայն դպիրներն ամեն առաւօտ եւ երեկոյ Հիւանդանոցի եկեղեցին կը զրկուին կարգաւ, փոխ ըսելու և քարոզ կարդալու:

Աշակերտք և աշակերտուհիք կ'ունենան օրական 4 ժամ դաստուութիւն, 5 ժամ սերտողութիւն, 1 ժամ մաքրութիւն և յարգարանք, 1½ ժամ ճաշի համար, 3½ ժամ դրօսանք և 9 ժամ քուն:

Աշակերտաց ամեն օրուան մաքրութեան եւ յարգարանքի համար առաւօտեան որոշեալ մէկ ժամէն զատ՝ ընդհանուր կերպով տղայոց մաքրութեան յատկացուած են Դշ. եւ Շր. կէս օրէ վերջի պահերը: Ամեն շաբաթ կէս օրէ վերջ աշակերտք կը փոխեն իրենց ձերմակեղէնները, երեսի սրբիչները, բարձի երեսները եւայլն. եւ կը ներկեն իրենց կօշիկները, 15 օրն անգամ մը կը փոխուին անկողնոյ սաւանները. ամիսն անգամ մը կը կտրուի տղայոց մազերը եւ բաղնիք կը զրկուին տղայքը. Աշակերտք տարուան մէջ կը ստանան երկու ձեռք զգեստ, ամիսն և ձմրան սկիզբները և 2—3 գոյգ կօշիկ:

Իժեկական խնամք եւ սնունդ. — Ս. Յակոբայ Որբանոցի աշակերտք շաբաթը երեք անգամ կանոնաւորաբար կ'ընդունին բժշկական այցելութիւն, Որբանոցիս բժշկին կողմանէ: Ազջկանց Որբանոցի մէջ բժշկական այցելութիւնը Հիւանդանոցի բժիշկներուն կողմէ տեղի կ'ունենայ:

Տկարակազմ կամ պատահաբար տկարութիւն ունեցող տղայք՝ բժշկին պատուէրին համաձայն մասնաւոր սնունդ կ'ընդունին:

Բացի նորեկ աշակերտներէն, բոլոր աշակերտաց կէսէն աւելին կրկին պատուաստուեցան Որբանոցիս բժշկին կողմանէ: Թեթեւ տկարութիւն ունեցող տղայք Որբանոցիս մէջ կը դարմանուին, իսկ լուրջ հիւանդութեան մը նշանները կրողներն անմիջապէս կը փոխադրուին ի Հիւանդանոց:

Ազջկանց Որբանոցի յատկացուած է կանանց Հիւանդարանի մէկ յարկարածինն, որուն հարիւրէ աւելի որբերու եւ որբուհիներու ընկուցութեան անբաւական ըլլալը քանիցս խնդիր ըրած ենք արդէն: Այս տեղւոյ անձկութեան պատճառաւ մտադրուած դանազան ներքին կարգադրութիւնք անգործադրելի մնացին այս տարեշրջանիս մէջ եւս:

Մանչերու Որբանոցն հաստատուած Ս. Յակոբայ վանուց մէջ՝

200 որբեր պատասպարելու անբաւական է. բաց աստի թէ՛ դըպրոցի բաժնին եւ թէ՛ մանաւանդ ննջարաններու հին ու խարխուղ վիճակը շատ նեղութիւն եւ անհանգստութիւն կը պատճառէ որբոց, ամիսն եւ մասնաւորապէս ձմրան մէջ, յորում աշակերտք օրերով, շաբաթներով չեն կրնար բացօթեայ շրջիլ, շրջագայիլ և զրօսնուլ ու մաքուր օդ ծծել, այլ ստիպուած կը մնան շէնքին մէջ:

Տարւոյս մէջ մէկ քանի կարեւոր նորոգութիւններ ու փոփոխութիւններ կատարուեցան շէնքին մէջ: Դպրոցի ձեմիչներն փոխադրուեցան շէնքէն դուրս, Որբանոցի կից գտնուած հին, կիսափուլ սրճարանին տեղը, որով մեծ անպատեհութեան մը առաջքն առնուեցաւ: Շինուեցաւ նաև սպասաւորներու եւ արհեստարանաց վարպէտներուն յատուկ սենեակ մը: (1)

Որչափ որ այս մասնակի փոփոխութիւններն ու նորոգութիւններն անհրաժեշտ եւ ստիպողական պահանջումներու համաձայն տեղի ունեցան, սակայն Որբանոցիս արդի շէնքին և տեղւոյն անբաւականութիւնը եւ ունեցած զանազան անպատեհութիւնները կան ու կը մնան տակաւին:

Աներկբայ ենք որ ի նորոյ կառուցանելի Որբանոցը պիտի գայ վերջապէս, մտաւոր ապագայի մը մէջ, հիմնական դարման տանիլ իրաց արդի կացութեան, որբերուն եւ որբուհիներուն՝ եւ Որբանոցի բարեկարգութեան ամեն նպաստաւոր պայմաններով օժտեալ պատասպարան մը պատրաստելով:

Տարեշրջանիս սկիզբը Ս. Յակոբայ Որբանոցի մէջ կը գտնուէին 185 աշակերտներ, ազջկանց Որբանոցի մէջ 59 փոքրահասակ մանչեր և 62 ազջկուսք. ընդամենն 244 մանչ եւ 62 ազջկուսք. համագումար 306 որբեր և որբուհիներ:

Տարւոյս ընթացքին մէջ աւելցած են 23 աշակերտներ և մեկնած են 27 մանչ եւ 1 ազջկի:

Հետեւաբար տարւոյս մէջ խնամուած որբերուն ըուն թիւն եղած է 329, որմէ գեղջելով մեկնող որբերուն թիւը, կը մնան տարւոյս վերջը Որբանոցս ներկայ մանջ եւ ազջկի 301 աշակերտներ:

Մեկնող սանուց եւ սանուհեաց թիւն է 28, որոց մին Բալուցի տղայ մը՝ Ռոպէրթ Քօլէթ ընդունուած է նոյն վարժարանի:

[1] Մոռուած է մեր անցեալ տարուան Տեղեկագրոյն մէջ յիշատակել շինութիւնն 40 ակողիներ պարունակող ննջարանի մը:

Հայ ուսանողներու պաշտպանութեամբ . 5 տղայ հայրենիք զրկը-  
ւած , 4ը որդեգրուած , 8ը իրենց ծնողաց յանձնուած , 2ը Հի-  
ւանդանոցի ոստայնանկութեան արհեստարանը դրուած , 1ը մե-  
ռած , 6ը արձակուած , և 1 աղջիկ իւր ծնողաց յանձնուած :

Տարեչրջանիս մէջ Որբանոցս ունէր 21 թոշակաւոր աշա-  
կերտներ որոնց վճարած թոշակներէ գոյացած է տարեկան 11,901  
Ղշ . Որբանոցիս պաշտօնէից վճարուած և տղայոց դպրոցական  
պիտոյից համար ծախսուած է 74,053¼ Ղշ :

Ուսուցչական խումբէ զատ սպասաւորաց թիւն է տասը . 2 գի-  
շերապահ , 2 սեղանապետ , 2 անասունհի մանչերու Որբանոցի և  
1 անասունհի աղջկանց Որբանոցի , 1 դռնապան , 1 անտես և 1  
հանդերձապահ :

Արհեստարանի Մանչերու Որբանոցի . — Մանչերու Որբանոցիս  
մէջ նախորդ տարի 1899ի սկիզբը հաստատուեցաւ կոշիկարութեան  
արհեստը :

Ներկայ տարեչրջանիս մէջ, Պատուարժան Խնամակալութեանդ  
ջանիւք , 1900 Մարտ 1ին հաստատուեցաւ նաև ուրիշ երեք ար-  
հեստներ , դերձակութիւն , աթոռագործութիւն և ոստայնան-  
կութիւն :

Արհեստներու հաստատութեամբն Որբանոցս վերածուեցաւ  
Վարժարան-Արհեստանոցի՝ ուր աշակերտք մէկ կողմէ կը ստանան  
իրենց անհրաժեշտ նախնական ուսումները . միւս կողմէ , չափա-  
հասք և աս հասարակ ամեն փափաքողք՝ կը հետեւին իրենց յար-  
մար և ընտրած արհեստին : Այս կերպով երկար ատենէ ի վեր  
որբերու ապագային համար մտածուած գեղեցիկ խորհուրդ մը և  
յայտնուած փափաքները Պատուարժան Խնամակալութեանդ ջանիւք  
և օրով իրագործուեցան : Արհեստի կը տրուին 12 տարեկանէ ըս-  
կեսալ տղայք , ի մասնաւոր ընտրուելով գաւառացի որբերէն :

Երեք նոր հաստատուած արհեստներու համար երեք հատ  
տաղաւարներ շինուեցան Որբանոցիս պարտէզին մէջ , ատենցմէ  
զատ նորոգուեցաւ և ընդարձակուեցաւ կոշիկ արհեստարանն որ  
անբաւական կուգար՝ գործոյն ստացած յաջողութեան և ընդար-  
ձակութեան համար :

Կոշիկ արհեստարանին մէջ ի սկզբան կ'աշխատէին 4 վար-  
պետներ . բայց այս տարւոյս մէջ աշակերտաց ձեռք բերած վար-  
ժութեան և յաջողակութեան շնորհիւ՝ երկու վարպետներ միայն  
պահուեցան՝ 14 աշակերտներու համար :

Կոշիկ արհեստարանը՝ Հաստատութեանս պատուարելոց հա-  
մար պէտք եղած կոշիկներն ամբողջովին հայթայթելէ զատ՝ ըն-  
դունեց նաև թէ մասնաւորներու և թէ Ազգ . վարժարաններու  
աղքատ տղայոց համար յանձնարարութիւններ , որոնք փութով և  
խնամով պատրաստուեցան :

Շնորհակալութիւն կը յայտնենք այս առթիւ Փափազեան  
Դամիանոս էֆէնտիի որ յանձն առած է անձնուիրարար կոշիկ ար-  
հեստարանի աշխատութեանց հսկել և իր ձեռնհասութեամբ ի  
գործ դնել ինչ որ կարեւոր է Արհեստարանին կանոնաւոր գործառ-  
նութիւններն ու յաջողութիւնը ապահովելու համար :

Աթոռագործի արհեստարանը ունեցաւ մէկ վարպետ , որուն  
քով աշխատեցան 10 աշակերտներ . գործաւորուհի մ'ևս բերուե-  
ցաւ , աթոռներուն հիւսուածքը սովբեցնելու համար : Աշակերտք  
չուտով յաջողեցան հիւսուածքի վարժուիլ , այնպէս որ գործաւո-  
րուհի ունենալու պէտք չմնաց : Այս արհեստարանը պատրաստեց  
զանազան ձեւերով աթոռներ և թիկնաթոռներ որոնց տոկունու-  
թիւնը և ճաշակաւոր ձեւը շատ կը գնահատուին : Տասը ամսուան  
մէջ շինուեցան 1000 աթոռ :

Դերձակի Արհեստարանին հետեւեցան այս 10 ամսուան մէջ 6  
աշակերտներ մէկ վարպետի առաջնորդութեամբ :

Այս Արհեստարանն ընդունեց մասնաւորներու կողմէ բաւական  
յանձնարարութիւններ , որոնք գոհացուցիչ կերպով կատարուե-  
ցան : Աշակերտք քիչ ժամանակի մէջ փափաքով և կանոնաւոր  
աշխատութեամբ գոհացուցիչ յաջողութիւններ ստացան , թէ ձեռ-  
քով և թէ մեքենայով կարելու . ամենէն յառաջադէմները չա-  
փառութեան և ձեւերու վարժութիւններ ևս ըրին :

Ոստայնանկի արհեստարանին մէջ հաստատուեցան 10 քեզ-  
կեաներ 10 աշակերտաց համար , որոնց առաջնորդեց միայն մէկ  
վարպետ :

Այս Արհեստարանի մէջ գործուեցան՝ աղջկանց և մանչերու  
համար գոգնոցու , յատկապէս Աղջկանց Որբանոցի որբուհիներ-  
ուն համար չրջագգեստի կտու , տղայոց համար շայագ և Հի-  
ւանդանոցի ներքին պէտքերուն համար գիշերանոցի և զանազան  
կտուներ :

Տարւոյս մէջ 4 արհեստարաններու աշակերտաց թիւն էր 40 ,  
որ հետզհետէ պիտի բարձրացուցուի :

Արհեստաւոր աշակերտաց փափաքն ու յարմարութիւնը դիտելով Արհեստարանք կը խոստանան աւելի յաջողութիւններ յառաջիկային :

Արհեստաւոր աշակերտաց թէ՛ քաջալերութեան և թէ՛ մասնաւորաբար ապագային իրենց իբրև դրամագլուխ ծառայելու համար, շարաթափճարներ յատկացուեցան : Ամէն շարաթ իւրաքանչիւր արհեստաւոր աշակերտի յանձնուած տետրի մը մէջ արձանագրուեցան իրենց իրաւունքը եղած շարաթականներն, որոնց գումարը պիտի յանձնուի իրենց՝ երբ իբրև շրջանաւարտ մեկին Որբանոցէս :

Արհեստաւոր աշակերտք կ'աշխատին արհեստարաններու մէջ ձմեռը օրական 6 ժամ, իսկ աձառը 8, նաև կը զբաղին օրական 2 ժամ ուսմամբ : Արհեստաւոր տղայոց տրուած դասերն են կրօնագիտութիւն, Հայերէն աշխարհարար, Թուրքերէն, Թուարանութիւն և Գծագրութիւն : Յառաջիկային յատուկ դասարան մը պիտի հաստատուի արհեստաւոր աշակերտաց ուսման համար ինչպէս նաև պիտի պատրաստուի յատուկ կանոնադիր մը արհեստարաններու և արհեստաւոր աշակերտաց մասին :

Տեղեկագրոյս ելեւմտից ցուցակներուն մէջ կը տեսնուին իւրաքանչիւր Արհեստանոցի արտադրած նիւթական շահը, որ արդարեւ գոհացուցիչ է :

Անշուշտ աւելի միտիթարական և ուրախալի է տեսնել որբերուն կատարած ջանքերը իրենց հետեւած արհեստին մէջ վարժուելու և յառաջանալու մասին, և յառաջդիմութիւնը՝ զոր նոքա սկսած են ցոյց տալ կարճ ժամանակի մը մէջ իրենց աշխատութեամբ :

Արհեստաւոր որբերուն այս փափաքը եւ եռանդուն աշխատութիւնը թէ՛ յոյս կը ներշնչէ Որբանոցիս Արհեստարաններու հետզհետէ առաւել զարգացման և թէ՛ կը պսակէ ակնկալութիւնները՝ զոր Պատուարժան Խնամակալութիւնդ կը տածէ արհեստական կրթութեամբ օժտուած պատանիներ հասցնելու եւ Ազգին ընծայելու մասին :

Այսպէս թէ՛ կրթական-ուսումնական եւ թէ՛ արհեստական տեսակէտով Որբանոցս գոհացուցիչ տարեշրջան մը բոլորեց, եւ լի եմք յուսով որ յարատեւ ջանքերով յառաջիկայ տարեշրջանն նորանոր յաջողութեամբ պիտի լրացնէ որբերուն եւ որբուհիներուն բարւոյն համար ընդհանուր Ազգին փափաքները, շնորհիւ Պատ-

ուարժան Հոգարարձութեան եւ կրթ. Խնամակալութեանդ :  
Շնորհակալութիւն կը յայտնենք երկու Որբանոցներու մեր կրթ. պաշտօնէից, որոնք իրենց ստանձնած պարտականութիւնները կանոնաւոր կերպիւ եւ խղճմտութեամբ կատարեցին եւ աշակեցան մեզ Որբանոցիս թէ՛ ուսումնական եւ թէ՛ արհեստական ճիւղերու աշխատութեանց մէջ :

Տեսուչ Որբանոցի  
Եէֆի Գուլիի Ազգ. Հաստատութան  
Ս. Գ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Գ. ԾԵՐԱՆՈՅ ԵՐ ԱՆԿԵԼԱՆՈՅ

Ծերանոցն՝ անոք ծեր ազգայնոց յատկացեալ յարկ մ'է, իսկ Անկելանոցն՝ աշխատելու անկարող, անտէր անձանց, փորձանաւոր աղջկանց ու լքեալ կանանց յատուկ է :

Աշխատելու կարող անկեալները թեթեւ աշխատութեանց կը գործածուին :

Հաստատութեանս մէջ ծնեալ եւ կամ իբրև ընկեցիկ Պատրիարքարանի կողմանէ զրկուած մանուկք՝ Հաստատութեանս գաւակ կ'անուանուին, որք ապա մերթ հոգեգաւակ կը տրուին և մերթ Որբանոցիս շրջանն աւարտելէ ետք արհեստի մէջ կը վարժուին. ի շփոհաստութեան մանչերու ճամբայ կը արուի և աղջիկները կ'ամուսնացուին, ինչպէս նաև պատսպարեալ անոք աղջիկներն :

Այժմ ունինք 135 ծեր և անկեալ, որոց 81ը այր են և 54ը կին կամ աղջիկ : Այս տարւոյ շրջանին մէջ 6373 զրշ. գանձուած է այս յարկերու պատսպարեալներէն :

Ե. ՈՒՍԱՆՈՂՔ

Ուսանող կ'անուանենք այն ամէն արական սեռէ որք ու ան- պաշտպան պատանիներն՝ որք կամ Մայրաքաղաքիս մէջ մի բարձ- րագոյն վարժարան կը յաճախեն եւ կամ մի արհեստի կը հետե-ւին (ի Քաղաքիս կամ ի Հաստատութեանս):

Այս պատանիներն ընդհանրապէս Որբանոցիս շրջանաւարտներ են, երբեմն ալ ուսման անյարմար որբեր եւ կամ դրսէն եկողներ:

Այժմ ունինք 32 ուսանողներ, որոնց մին Ռժշկական վարժարա- նի, մին Դեղագործութեան վարժարանի, 2ը Կեդրոնական վար- ժարանի կը հետեւին. իսկ 2ը ստայնանկութիւն, 7ը մոմագործու- թիւն, 4ը դեղագործութիւն, 5ը թիթեղագործութիւն, 3ը դեր- ձակութիւն, 2ը ատաղձագործութիւն, մին մեքենավարութիւն կ'ուսանին, եւ 3ը Հաստատութեանս Տնօրէնութեան Դիւանի օ- ժանդակ գրագիրներ են:

Զ. ՄՈՍՊԵՐԱՆ

Մոմարանս՝ Հաստատութեանս Հասոյթից մի կարեւոր ազդիւրն է: Կ. Պոլսոյ Հայազգի ժողովրդեան հարսանեաց եւ եկեղեցեաց լուսաւորութեան մոմերն աստի գնուիլը պարտաւորիչ ըրած է Ազգ. Պատրիարքարանը:

Հաստատութեանս Մոմարանը՝ Մայրաքաղաքիս նոյնատեսակ գործարանաց առաջինը կրնայ համարուիլ եւ ամենայնիւ կրնայ գերազանցել զանոնք:

Մոմարանիս գործարանի պետն՝ Որբանոցիս վաղեմի սաներէն է, որոյ կ'աջակցին ուսանողաց դասակարգէն 7 որբեր:

Մոմարանս՝ քաղաքիս մէջ եւ Հոգաբարձութեանս գրասենե- կին կից մասնաւոր վաճառանոց մ'ունի, ուր տեղի կ'ունենան գը- նումներն ու ապսպրանքները:

Ի ստորեւ կը ներկայացնենք Մոմարանիս 1900 տարւոյ մա- տակարարութեան եւ հաշուեկշռի ցուցակներն:

Մ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Խ Ե Ն		1900 Յունուար 1է ցվերջ Գեկեկներէրի	
	Դրշ.		Դրշ.
Չանաղան ծախք	2831	Գործարանէն եղած չափ արտադրանց վրայ	5704
Պաշտօնէից ամսական	8400	Վաճառատունէն » »	23177 50
Գրասենեկի վարձք	960	Չէն եւ չափ. եղած չափ	100 25
Յուսկեալ չափ	21025 75	Նիւթեղէն նուէր.	523
		Դրամական նուէր	3745
	33216 75		33216 75
<b>Կ Շ Ի Ռ</b>			
	Դրշ.	Չանաղանց պարտք	Դրշ.
Պատրաստ արտադրանքի գործարանի	32440 50		785 75
» ի վաճառատան	9081 50		65156 87 1/2
» կարտիք	1979 25		
» դրամ	360 50		
Պահանջ գանաղաններէ.	22080 87 1/2		65942 62 1/2
	65942 62 1/2		

**Մ Ա Ս Ն Բ .**

**Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Ս Օ Ժ Ա Ն Դ Ա Կ Մ Ա Ս Ե Ր Ն**

**Ա . Դ Ե Ղ Ա Ր Ա Ն**

Հաստատութեանս Դեղարանն ունի երկու վկայեալ դեղագործ և չորս աշակերտ ուսանողաց դասակարգէն :

Դեղարանն կը պատրաստէ ո՛չ միայն Հիւանդանոցիս շուրջ 200 հիւանդաց աւօրեայ դեղագործերն , այլ և յիմարաց , ծերոց , անկե-  
լոց և որրոց մէջ թեթեւ տկարութիւն ունեցողներու համար բը-  
ժիշկներու կողմանէ հրահանգեալ դեղերն , որով աւօրեայ շուրջ  
աւելի քան 250 դեղագործեր կը պատրաստուին ամենայն կանոնա-  
ւորութեամբ :

Ըստ Հաստատութեանս մայր տուժարին տարւոյս շրջանին մէջ  
սպառեալ դեղորէից գումարը կը բարձրանայ 20696<sup>1</sup>/<sub>4</sub> զրուշի :

1900 Դեկտ . 31ին դեղարանս պատրաստ ունէր 7137<sup>1</sup>/<sub>2</sub> զրշ . ի  
դեղ , եւ շուրջ 1516<sup>1</sup>/<sub>2</sub> զրշ . ի գոյք (կարասի , գործիք եւլն .) :

**Բ . Հ Ա Ն Դ Ե Ր Ձ Ա Տ Ո Ւ Ն , Լ Ո Ւ Ս Յ Ա Ր Ա Ն , Ց Ն Ց Ո Տ Ա Տ Ո Ւ Ն**

**Ե Ի Բ Ա Ղ Ա Ն Ի Բ**

Հանդերձատուն կ'անուանի Հաստատութեանս հանդերձեղի-  
նաց յատուկ նիւթերու մթերանոցն , ուր միշտ պատրաստ կը գտ-  
նուին մասնաւոր քանակաւ ճերմակեղէնք , զգեստեղէնք . եւ ասոնց  
պատրաստութեանց յատուկ նիւթեղէններ :

Հանդերձապահի խնամոց յանձնուած են նաեւ Հաստատու-  
թեանս գոյից այլ մթերանոցներն :

— Լուացարանն յանձնուած է մի պետ լուացարարուհւոյ , ուր  
կաշխատին ամսականաւոր լուացարարուհիներէ զատ եւ Անկեղա-  
նոցէն աշխատելու կարող կիներ :

Հաստատութեանս ճերմակեղինաց պատրաստութիւնն , կար-  
կտուքներն ու արդուկն՝ ընդհանրապէս Անկեղանոցի պատսպարեալ  
կանանց միջոցաւ տեղի կ'ունենայ :

— Ցնցոտատուն (պէյթիւլմալ) կ'անուանենք հիւանդաց , յի-  
մարաց և պատսպարելոց սեպհական զգեստներու մթերանոցն որ և  
հանդերձապահի հսկողութեան յանձնուած է : Հաստատութեանս  
մէջ մեռնող պատսպարելոց զգեստեղէններն Հաստատութեանս կը  
մնան և ամիսն անգամ մը կը վաճառուին , որ տարեկան 30—40  
ոսկւոյ շահ մը կը թողու Հաստատութեանս : 1900 տարւոյ մէջ  
Ցնցոտատան արդիւնքն եղած է 3897 զրշ :

— Բաղանիքի եւ ջրի ջեւոցներն ընդ հսկողութեամբ հան-  
դերձապահի են :

Հանդերձատան տարեկան սպառումն է շուրջ 800—900 ոսկի .  
1900 տարւոյ մէջ սպառեալ հանդերձեղինաց գումարն եղած է ըստ  
մայր տոմարի 105,930<sup>3</sup>/<sub>4</sub> զրշ . իսկ նորոգութեան ծախսն 696<sup>1</sup>/<sub>2</sub>  
զրշ : Դեկտ . 31ին պատրաստ ունէինք Հաստատութեանս մէջ 194,  
707<sup>1</sup>/<sub>4</sub> զրշ . ի հանդերձեղէնք որոյ մանրամասն ցուցակն ի ստո-  
րեւ կը պատկերենք :

Տարւոյս շրջանին մէջ սպառեալ (մաշած եւ կտորած) կարաս-  
եաց գումարն ըստ մայր տոմարի 14,467 զրշ . ի կը յանգի , իսկ նորո-  
գութեան ծախսը 11,822<sup>3</sup>/<sub>4</sub> զրուշի : Դեկտ . 31ին պատրաստ ունէինք  
180,297<sup>1</sup>/<sub>2</sub> զրշ . ի կարասիք , որոյ մանրամասն ցուցակն եւս ի  
ստորեւ կը տեսնուի :

**Պ Ա Տ Բ Ա Ս Տ Հ Ա Ն Դ Ե Ր Ձ Ե Դ Է Ն Ի**

(1900 Դեկտ . 31ին)

			Ղ ու բ ու շ
1484	Հատ	Սեղանի անձեռոց	1484
93	»	Ծածկոց սեղանի	651
468	»	Գոգնոց	1404
391	»	Ֆէս	1173
684	»	Վարագոյր	2052
18	»	Շալ	90
		Վերածելի	6854

	Վերածեալ	Ղրշ.	
233	Հատ	Խըրքա	6854
288	»	Գիշերանոց դտակ	4165
1	»	Ծրար մկրտութեան	288
1742	»	Եազմա	45
505	»	Ժաքէթ կամ ապա պուլուզ	45
406	»	Տափատ	10100
47	»	Առտնին պարեգօա (րօպ տը շամպրը)	8120
54	»	Վերարկու	1410
8	»	Բռնաշապիկ (քամիզօլ տը ֆօրս)	460
28	»	Բաճկոնակ	540
2145	»	Թաշիինակ	84
27	»	Չեռնակալ (դարսօլ)	700
22	»	Գօտի (կաշի)	920
21	»	Սանտր	1740
128	»	Չեռայ անձեռոց	5
58	»	Խըսիրէ խողանակ	64
41	»	Խավլու բաղնիքի	29
116	»	Ղենչակ	205
347	»	Շըջազգեստ	440
135	»	Ատուեակէ շապիկ	3470
17	»	» վարաիկ	135
10	»	» ժաքէթ կամ միսօ	17
294	»	Պօլիկ կամ գամիզօլ	50
22	»	Գասգէդ տղայոց	2940
84	»	Երկայն շապիկ	22
18	»	Էնթարի	840
120	»	Փողկապ տղայոց	180
2	»	Ծածկոց դադազի	30
2	»	Դրօշակ Օսմանեան	40
25	»	Սեզմիրան կէս (քօրսէ)	20
158	»	Բէլըրին	125
12	»	Ծրար	1580
135	»	Խըսիրէ գլխարկ տղայոց	12
200	»	Գլխարկ աղջկանց ու յիմարաց	270
			200
	Վերածելի	Ղրշ.	42715

	Վերածեալ	Ղրշ.	
5	Հատ	Պուրնուզ	42715
25	»	Միսօ	100
596	»	Էնթարի կարճ ու երկայն	250
1560	»	Գիշերազգեստ	2980
2611	»	Խավլու երեսի	7800
867	»	Սաքօ կամ պլուզ դանազան տեսակ	2611
858	»	Վերմակի երես	8570
2993	»	Շապիկ	858
3014	»	Վարաիք	14965
17	»	Մուշամպա անձրեւանոց	15070
703	»	Չանազան տեսակ տափատ	170
4462	»	Սաւան	3515
2617	»	Մահիճի երես	35696
47	»	Կրճկալ	8851
2	»	Մաշաք	47
132	»	Էլլասթիզ մուշամպա	80
77	»	Չոյզ ձեռնոց լաթէ	660
110	»	Նալըն	10
1149	»	Կօշիկ եւ հողաթափ	110
2514	»	Գուլպա	22980
6	ձեռք	Չգեստ դադաղակրաց	2514
38	հօխայ	Բամպակ	30
75	ծրար	Կտաւ շապիկցու	228
1	»	Պատանքցու	300
2	»	Թիւլպէնթ ձերմակ	24
2	»	Թիւլ սեւ	20
4	մէթրօ	Էլլասթիզ մուշամպա	5
188	»	Խասա	80
145	»	Բանէվաջօ	376
1957	»	Ամէլիքան (67 ծրար)	290
173	»	Տպածոյ	1957
10	»	Եէլքէն պէզի	346
49,50	»	Կարմիր ատուեակ	50
131	»	Թիւլիւ ձերմակ ֆանէլա	891
			131
	Վերածելի	Ղրշ.	175502

		Վերածեալ	Ղրշ.	175502
240	Մէթրո Ֆանէլա շրջազգեստցու.			240
76	» Թուսական Ասուեակ			76
100	» Ըսթօրցու և 3 հատ պատուհանի ըսթօր			880
250,40	» Տիմի			500
216,50	» Աշճի պէզի			108,25
13	» Բէթէնլի տօքումա			68
475,50	» Ապա Թուսական			7686
36	» » կապտագոյն			576
7	» Շրջազգեստցու.			70
4,50	» Թևի աստար			5
1,50	» Չուխա սեւ.			15
11,50	» Թիւլ վարազոյրցու.			11,50
17	» Իսպինաթօ			17
2	» Տափատցու կտաւ.			10
905	» Տօքումա գիշերանոցցու.			2036,25
306,50	» » Շրջազգեստցու.			689,25
207	» » Էւրոպական			621
367,20	» » զգեստցու.			1835
186,50	» » » յիմարայ			746
606,20	» » գողնոցցու.			2120
	Չանազան նիւթեղէնք			590
	» տեսակ թիրէներ			405
	Գումար	Ղրշ.		194.707,25

Պ Ա Տ Ր Ա Ս Տ Կ Ա Ր Ա Ս Ի Ք

( 1900 Դեկտեմբեր 31 )

Պ Ղ Ն Ձ Ե Ղ Է Ն Ք

	Հօխա	Տրամ	Ղրշ.
12 Հատ Կրակարան	100		800
20 » Քարավանա	15		120
Վերածելի	115		920

		Վերածեալ	Հօխա	Տրամ	Ղրւշ
		Վերածեալ	115		920
135	Հատ Մօրչուպա		27		216
1	» Կոնք եւ ըպրքք		2		16
21	» Կոնք		21		168
2	» Սիթիլ		6		48
9	» Թքաման	4	200		36
52	» Ափսէ	52			416
8	» Կճիճ	14	300		118
30	» Թաս	27			216
47	» Սահան	35			280
56	» Թէնճիրէ	108	200		868
15	» Խալիին	308			2464
6	» Եէտէկ	148	100		1996
4	» Քամոց	13	100		106
5	» Հէլվահանէ	28	300		230
13	» Քուչհանէ	25			200
26	» Քացաուօրա	168	200		1348
10	» Պաքրած	33			264
5	» Շերեփ	6			48
4	» Տապակ (Թալա)	7	200		60
4	» Լէնկէր	13	100		106
2	» Կրակի թի	3	100		26
2	» Սամափէր	32			256
95	» Ջրի շիշ	55	100		442
10	» Պնակ	5			40
2	» Կուժ	4	200		36
14	» Սափոր	30	040		240
126	» Չանազան կափարիչներ	50			400
2	» Տաշտ լուացից	23			184
		1367	100	Ղրւշ.	11748

ՉՆԱՉՆ ԿՍՐԱՄԻՔ

	Ղրշ.	
Թանազեղէնք (սաձ)	1286	
Անագապղինձք (թուձ)	598	
Արոյրեղէնք (փիրինձ)	666	
Հանապղինձք (պաղփօն)	50	
Թիթեղեղէնք	64	
Ձինկեղէնք (ճինկօ)	2642	
Երկաթեղէնք	15191	
Յախճապակի և էմայէ	10931	
Բրդեղէնք	1800	
Բիքեղէնք	10120	
Բամբակեղէնք	11421	
Չանազան կարասիք	80483, 50	
Ս. Յակօբայ եկեղեցւոյ արծաթեղէնք	35	
» » անօթք	400	
» » Ղգեստք	400	
Հոգաբարձութեան գրասենեկի կարասիք	8680	
Գրեանք	15000	
Բժշկական և վիրաբուժական գործիքներ	29636, 25	
Ոստայնանկի գործիքներ	300	
Թիթեղագործի »	2435, 75	
Ատաղձագործի »	1304, 50	
Երկաթագործի »	240	
Պարտիզպանի »	162	
Չեռագործի ու գորգաշինութեան գործիքներ	240	
Դեղարանի »	1516, 50	
Տարբարուծական աշխատանոցի »	5054, 50	
	Գումար	Ղրշ.
		200,657
Յաւելլով նախորդ գումարը	»	11,748
Ընդհանուր գումար կարասեաց	»	<u>212,405</u>

Գ. Մ Ա Ռ Ա Ն

Մասնաւոր պաշտօնէի մը հսկողութեան յանձնուած է Հաստատութեան մասանը, եւ փայտի, ածուխի ու քարիւղի մթերանոցները:

Հաստատութեան սնունդի գլխաւոր տարրերն հացն ու միսը՝ կայսերական կառավարութեան կողմանէ կը հոգացուին:

1900 տարւոյ մէջ սննդոց մասին եղած ծախսոց գումարն է ըստ մայր տօմարի 552,056 1/4 Ղրշ. (որոյ մանրամասնութիւնը ի ստորեւ կը ներկայացնենք): Արդ Հաստատութեան պատասխարեւոյ գումարը 1000 ենթադրելով, անձնուր անհատի տարեկան սնունդի ծախսն է 552 Ղրշ. եւ կամ օրական 60 փարայ:

Դեկտ. 31 ին Մասնիս մէջ գտնուած պատրաստ պարէնին գումարն է 13,256 Ղրշ. որոյ մանրամասնութիւնն յետագայ ցուցակաւ կուտանք:

Լուսաւորութեան, ջեռուցման եւ օճառի համար այս տարւոյ սպառումն արժած է 41,219 1/4 Ղրշ. այս նիւթերէն պատրաստ ունինք Դեկտ. 31ին 18,358 3/4 Ղրշ. ի սպրանք, որոց ցուցակն եւս ի ստորեւ կուտանք:

